

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
նոյեմբերի 5 -ի N 1779 - Ն որոշման

«Հավելված Ի1
Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի
ներդրումային ծրագրի Տրանշ 2
(Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի
համար հողի օտարման և տարաբնակեցման
ծրագրի

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-2 (Աշտարակ-
Թալին) ճանապարհահատվածի համար հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի
լրացում՝ Աշտարակ-Թալին կմ40+000-կմ47+400 հատվածում (Կոշ, Շամիրամ համայնքներ)
առկա հաղորդակցուղիների տեղափոխման արդյունքում ազդակիր հողերի համար

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ՀՀԴ	Հայաստանի Հանրապետության դրամ
ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ՏՀՍՀ	Տվյալների համալիր ստուգման հաշվետվություն
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ԱՄԳ	Արտաքին մոնիտորինգի գործակալություն
ՀԿ	Հայաստանի կառավարություն
ԻԽ	Իրականացման խորհրդատու
ՀՕՏՇ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ԲՖԳ	Բազմափուլ ֆինանսավորման գործիք
ՀՀՃՄՆԾ	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր
ՕԳ	Օտարման գոտի
ԸԱԳՀ	Ընտանիքների անապահովության գնահատման համակարգ
ՃԴ	Ճանապարհային դեպարտամենտ
ԱՄՆԴ	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1.1.	Ծրագրի կարգավիճակը	5
1.2.	Հանրային հաղորդակցուղիների նախագծումը և տեղափոխումը	5
1.3.	Շրջանակը և նպատակները	6
2.	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	7
2.1.	Մեթոդաբանություն	7
2.2.	Ազդեցության գնահատում	8
2.3.	Խիստ ազդակիր և խոցելի ԱԵՏՏ-ներ	12
2.4.	Ազդեցությունների ամփոփում	12
2.5.	Ազդակիր տնտեսությունների մարդահամար	14
3.	ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ	15
4.	ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՄՓՈՓ ԲՅՈՒՋԵ	29
5.	ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ	30
6.	ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	30
7.	ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ	31
8.	ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	35

Աղյուսակ 1. Տրանշ 2-ի հաղորդակցուղիների տեղափոխման հատվածները.....	6
Աղյուսակ 2. Ազդեցություն հողերի վրա.....	10
Աղյուսակ 3. Ազդեցությունը շինությունների վրա.....	11
Աղյուսակ 4. Ազդեցությունը բարելավումների վրա.....	11
Աղյուսակ 5. Ազդեցությունը մշակաբույսերի վրա.....	11
Աղյուսակ 6. Ազդեցությունը պտղատու ծառերի վրա.....	11
Աղյուսակ 7. Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա.....	12
Աղյուսակ 8. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների/ Անձանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ ըստ ազդեցության տեսակների.....	13
Աղյուսակ 9. ԱԵՏՏ-ների տարիքային բաժանում՝ ըստ սեռի.....	14
Աղյուսակ 10. Զբաղվածության կարգավիճակը.....	15
Աղյուսակ 11. Իրավագործության մատրիցա.....	16
Աղյուսակ 12. Փոխհատուցում մասնավոր և համայնքային հողերի դիմաց.....	23
Աղյուսակ 13. Փոխհատուցում վարձակալված հողերի դիմաց.....	24
Աղյուսակ 14. Ապօրինի օգտագործվող հողերի համար վերականգնման օժանդակություն.....	24
Աղյուսակ 15. Փոխհատուցում օրինական շինությունների համար.....	25
Աղյուսակ 16. Վերականգնման օժանդակություն ապօրինի շինության համար.....	25
Աղյուսակ 17. Փոխհատուցում բարելավումների համար.....	25
Աղյուսակ 18. Փոխհատուցում մշակաբույսերի համար.....	26
Աղյուսակ 19. Փոխհատուցում պտղատու ծառերի համար.....	27
Աղյուսակ 20. Փոխհատուցում փայտանյութ տվող ծառերի համար.....	28
Աղյուսակ 21. Փոխհատուցում դեկորատիվ թփերի համար.....	28
Աղյուսակ 22. Փոխհատուցում խիստ ազդեցության համար.....	28
Աղյուսակ 23. Խոցելիության օժանդակություն.....	28
Աղյուսակ 24. Ամփոփ բյուջե.....	29
Աղյուսակ 25. Համաձայնագրերը ստորագրելուց հրաժարվելու հիմնավորումներ.....	32
Աղյուսակ 26. Լրացում 1-ի իրականացման ժամանակացույց.....	34

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ծրագրի կարգավիճակը

1. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) համաձայնվել է Հայաստանի կառավարությանը (ՀԿ) տրամադրել 500 միլիոն ԱՄՆ դոլարի բազմափուլային (բազմատրանշային) ֆինանսավորում՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման համար: Սկզբնական փուլը, որն ընդգրկում է Արարատից Երևան, Աշտարակ և Թալին քաղաքների միջև և մինչև Գյումրի քաղաքն ընկած ճանապարհը, բաժանված է երկու նախագծերի՝ Տրանշ-1 և Տրանշ-2: Ծրագիրը նախատեսում է գոյություն ունեցող M1 մեկական գծով երկկուսանի ճանապարհի արդիականացումը, վերակառուցումը միջազգային ստանդարտի 1-ին Կարգին համապատասխանող չորս գծով երկկողմանի ճանապարհի: Համընդհանուր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ նոր ծրագիծը հիմնականում կրկնում է գոյություն ունեցող ավտոմայրուղին, սակայն նաև ներառում է շրջանցման ուղիներ՝ մայրուղու նոր հատվածներում գտնվող համայնքները շրջանցելու համար: Տրանշ 2-ի (այսուհետ՝ Ծրագիր) առարկան Մ1 մայրուղու 42 կմ երկարությամբ Աշտարակ-Թալին (կմ 29+600 – կմ71+500) հատվածն է: Ծրագիրն առաջացնում է հողերի օտարման և տարաբնակեցման անհրաժեշտություն, որի հետևանքները հարկադիր տարաբնակեցման մասով դասվում են “Ա” կատեգորիային:

2. Տրանշ-2 Աշտարակ-Թալին հատվածի մասով հողօտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏԾ) հաստատվել է ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից 2012թ. սեպտեմբերին: Տրանշ-2 ՀՕՏԾ-ն իրականացվել է 3 առանձին ենթահատվածներով: 1-ին և 2-րդ ենթահատվածների մասով ՀՕՏԾ-ի իրականացումն սկսվել է 2012 թվականի հոկտեմբերին: Ենթահատված 1-ում ՀՕՏԾ-ի իրականացումն ավարտվել է 2013 թվականի հունվարին, իսկ ենթահատված 2-ում՝ 2013 թվականի հուլիսին: 3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացումը սկսվել է 2013 թվականի ապրիլին և ավարտվել 2014 թվականի օգոստոսին: 1-ին ենթահատվածի մասով Համապատասխանության հաշվետվությունը պատրաստվել է արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) կողմից և հաստատվել ԱԶԲ-ի կողմից 2013 թվականի մարտին, իսկ 2-րդ և 3-րդ ենթաբաժինների մասով համապատասխանության հաշվետվությունները հաստատվել են ԱԶԲ-ի կողմից համապատասխանաբար՝ 2013 թվականի հուլիսին և 2014 թվականի հոկտեմբերին: Միջազգային կապալառուի (“Corsan-Corviam Construcccion S.A.”) շինարարական աշխատանքների մեկնարկի թույլտվությունը տրվել է ԱԶԲ-ի կողմից յուրաքանչյուր հատվածի մասով համապատասխանության հաշվետվություններն ընդունելուց հետո:

1.2 Հանրային հաղորդակցողիների նախագծումը և տեղափոխումը

3. Հանրային հաղորդակցողիների տեղափոխումը Տրանշ-2-ի ճանապարհահատվածում (Աշտարակ-Թալին հատված, 42 կմ) չի ներառվել հաստատված ՀՕՏԾ-ի շրջանակներում, քանի որ հանրային հաղորդակցողիների տեղափոխումը ֆինանսավորվել է կառավարության կողմից: Սակայն, քանի որ հանրային ծառայությունների տեղափոխումը դիտարկվել է որպես հարակից օբյեկտ, և որոշ հաղորդակցողիներ տեղական կապալառուների պայմանագրից տեղափոխվել են “Corsan-Corviam Construcccion S. A.” միջազգային Կապալառուի պայմանագիր, ԱԶԲ-ն պահանջել է հաղորդակցողիների մի շարք տեղափոխությունների ՕԳ-ների մասով կիրառել համալիր համապատասխանության ստուգման գործընթաց:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային Կապալառուի հետ 27.04.2017թ. ստորագրվել է թիվ 3 Փոխըմբռնման հուշագիր, որտեղ գործատուի կողմից տեղափոխման ենթակա հաղորդակցողիների ցանկը ներկայացված է Հավելված 3-ում, իսկ միջազգային Կապալառուի կողմից՝

Հավելված 4-ում՝ համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ հանրային հաղորդակցողիների, այդ թվում՝ խմբերի խողովակների, կապի մալուխների, գազատարների և էլեկտրական սյուների, տեղափոխումը պետք է իրականացվի տեղական կապալառուների կողմից՝ Գործատուի (կողմից) վարձված տեղական նախագծային ընկերության կողմից պատրաստված մանրամասն նախագծերի համաձայն: Միջազգային Կապալառուի գործունեության շրջանակներում ներառված է միայն ոռոգման ենթակառուցվածքների տեղափոխումը, որոնց աշխատանքային գծագրերը համաձայնեցվել և հաստատվել են Ինժեների և Գործատուի կողմից:

5. Ներկայումս այնպիսի հաղորդակցողիները, ինչպիսիք են ոռոգման և ջրամատակարարման համակարգերը, Տրանշ-2-ի Կոշի և Շամիրամի 7 կիլոմետրանոց հատվածում (40+000-կմ 47+400 կմ, Աշտարակից ձախ կողմ) դեռևս չեն տեղափոխվել, քանի որ այն կհանգեցնի ՀՕՏ ազդեցությունների, ինչն, իր հերթին, պետք է նախ չափվի, գնահատվի և համապատասխանաբար փոխհատուցվի՝ մինչև դրանց տեղափոխումը: Տրանշի ողջ երկայնքով՝ ՕԳ-ներում կտեղադրվեն կապի մալուխներ հողային աշխատանքների (փորում, հավասարեցում) ավարտից հետո՝ մալուխները չվնասելու երաշխիք ստեղծելու նպատակով: Էլեկտրական սյուները և գազի խողովակները ամբողջովին տեղադրված են:

1.3 Շրջանակը և նպատակները

6. Սույն Լրացում 1-ի հիմնական նպատակն է գնահատել սոցիալական ազդեցությունը և բացահայտել այն անձանց, որոնց վրա ազդեցություն կունենա Փուլ 1-ի շրջանակներում իրականացվող հանրային ենթակառուցվածքների տեղափոխումը (Տե՛ս Աղյուսակ 1), փոխհատուցել նրանց կորուստները մինչև հանրային հաղորդակցողիների տեղափոխումը, և օգնել նրանց վերականգնել իրենց կենսապահովման միջոցները՝ համաձայն ԱԶԲ-ի 2009 թվականի ԱՄԲ պահանջների և դրույթների, հաստատված Տրանշ-2-ի ՀՕՏԾ-ի և ազդեցության ենթարկված անձանց (ԱԵԱ) առանձին խմբերի իրավունքներին առնչվող ՀՀ կառավարության նոր որոշումների:

7. Լրացում 1-ի ծավալները ներառում են. (i) Ամբողջ ազդակիր գույքի և բոլոր ակտիվների մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՉՀ), (ii) ԱԵԱ պրոֆիլը՝ բնակչության մարդահամարի միջոցով, (iii) տարաբնակեցման բյուջեն, (iv) ազդեցության ենթարկված անձանց հետ խորհրդակցություններ և տեղեկատվության հրապարակում, (v) բողոքների լուծման մեխանիզմ, (vi) Լրացում 1-ի իրականացման մոնիտորինգի իրականացման միջոցառումներ:

8. Ելնելով Ծրագրի իրականացման նպատակահարմարությունից՝ Տրանշ 2-ի շրջանակներում հանրային ծառայությունների տեղափոխման հետազոտությունը իրականացվելու է, և ազդեցությունները փաստաթղթավորվելու են երեք փուլով (տե՛ս Աղյուսակ 1): Առաջին փուլը ներառված է սույն Լրացում 1-ում: Երկրորդ փուլի գրասենյակային ուսումնասիրությունը արդեն սկսվել է, և կորոշվեն այն ենթահատվածները, որոնց համար կպահանջվի ՏՀՍՀ-ի և/կամ Լրացում 3-ի մշակումը: Երրորդ փուլի հանրային հաղորդակցողիներն արդեն ներառված են նոր ուղեանցի ՕԳ-ում, որի համար պատրաստվել է Լրացում 2-ը:

Աղյուսակ 1. Տրանշ 2-ի հաղորդակցողիների տեղափոխման հատվածները

Փուլ	Հատված	Սկիզբ	Ավարտ	ՀՕՏ Փաստաթուղթ
1.	7կմ (ձախ կողմ)	կմ 40+000	կմ 47+400	Լրացում 1
2.	T2-7կմ (ձախ կողմ)	կմ 37+544- կմ40+000	կմ 47+400-կմ 71+500	Լրացում 3 /ՏՀՍՀ/
3.	Ագարակի շրջանցի հատված 8կմ	կմ 29+600	կմ 37+544	Լրացում 2

9. Հաշվի առնելով Կապալառուին ՀՕՏ ազատ տարածքի տրամադրման հրատապությունը՝ 7 կմ հատվածի համար Լրացում 1-ի պատրաստումը դարձել է առաջնային խնդիր: Բացի ձախ կողմում հայտնաբերված ազդեցություններից, սույն Լրացում 1-ը ներառում 7 կմ հատվածի աջ կողմում 1 ազդակիր ԱԵԱ (ԱԵԱ-ն բողոք է ներկայացրել ՃԴ խնդրելով փոխհատուցել վնասը: Նշված սեփականության գույքագրումն իրականացվել է 27.12.2017թ.: Գույքագրման արդյունքները փաստաթղթավորվել են, վնասված ծառերի և բարելավումների նկարագրության արձանագրությունը պատրաստվել և ստորագրվել է դաշտային այցելության բոլոր մասնակիցների կողմից: Արձանագրության մեկ օրինակը պաշտոնապես տրամադրվել է սեփականատիրոջը ՃԴ կողմից:) (43+15 կմ 43+180 կմ), որին վնաս է պատճառվել օժանդակ էլեկտրական սյան տեղադրման արդյունքում:

2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Մեթոդաբանություն

10. Սույն Լրացում 1-ի ներքո ազդեցության գնահատման նպատակով իրականացվող քայլերը հետևյալն են.
- ա) ՀՕՏ սահմանի որոշումը. կմ 47+400 – կմ 40 + 000 հատվածի ձախ կողմում հաղորդակցուղիների տեղափոխման հետևանքով առաջացած ազդեցությունը որոշելու նպատակով՝ կապալառուի կողմից սահմանվել է ՀՕՏ սահմանը, որը ներառում է ջրի և գազի խողովակաշարերի, կապի մալուխների և ռոտզման համակարգերի համար անհրաժեշտ տարածքները: Էլեկտրական սյուների ՀՕՏ-սահմանն արդեն որոշվել է հաղորդակցուղիների Նախագծողի կողմից: Ճշգրիտ ՕԳ-ի որոշման համար բոլոր տեսակի հաղորդակցուղիների առանձին նախագծերը միացվել են մեկ ֆայլում, որտեղ վերջին հաղորդակցուղու սահմանը նշագրվել է որպես ՀՕՏ-սահման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագրի ներքո Տրանշ-2-ի ՀՕՏ-ի ՕԳ-ն հիմնված էր ճանապարհի նախագծի +1մ լուսանցք՝ ծածկի գագաթնամասից կամ թեքատի վերին մասից ճանապարհային նախագծման վրա, 7կմ հատվածի համար նախատեսված նոր ՕԳ-ն որոշվել է հաղորդակցուղիների և արդեն իսկ իրականացված ՀՕՏ-ի վերադիր սահմանների արդյունքներով:
 - բ) Ազդակիր սեփականության ցանկի պատրաստումը. ՀՕՏ սահմանի՝ պաշտոնապես պահանջված կադաստրային քարտեզի հետ համադրման արդյունքում ստացվել է ազդեցության ենթարկված լուծածակագրերի ցանկ: ՀՕՏ-ի սահմանների հիման վրա ստացված լուծածակագրերի ցանկը համեմատվել է ՀՕՏ-ի շրջանակներում արդեն իսկ օտարված սեփականության ցանկի հետ՝ նպատակ ունենալով պարզել (i) մասնակի, (ii)ամբողջությամբ օտարված, ինչպես նաև ազդեցությանը նոր ենթարկված սեփականության օբյեկտների ցանկը: Ազդակիր սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը (իրավական կարգավիճակ, սեփականատիրոջ/վարձակալի անվանում, հողամասի/շինության մակերես և տարածք, նպատակային և գործառնական նշանակություն և այլն) ձեռք է բերվել ՀՕՏ վերաբերյալ փաստաթղթերի լրակազմման ընթացքում համայնքների ղեկավարներիցև ԱԵԱ-ներից: Հավաքագրված տեղեկատվությունը համեմատվել է ՃԴ-ին՝ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության հետ:
 - գ) Դաշտային այցելությունները. Գրասենյակային աշխատանքի տվյալների հիման վրա հայտնաբերված ազդեցությունը դաշտային այցելությունների ընթացքում ստուգվել է ուսումնասիրման խմբի ներկայացուցիչների (չափագրման, գույքագրման մասնագետների և գյուղատնտեսի, գնահատողների և այլոց) կողմից, ՃԴ ինժեների մասնակցությամբ, որի հիման վրա էլ Լրացման համար որոշվել են համապատասխան հատվածները:
11. Գույքի և ազդակիր տնային տնտեսությունների հետազոտումը. Սույն Լրացում 1-ում ներառված

ազդեցությունները դեռևս չեն արտացոլում շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած վնասները, այլ ճշգրտորեն չափվել, գույքագրվել և գնահատվել են փաստացի պայմանների հիման վրա: Ազդեցության յուրաքանչյուր տեսակի համար նախատեսված փոխհատուցումը հաշվարկվել է Տրանշ-2-ի ՀՕՏԾ-ով հաստատված իրավունքների մատրիցայի հիման վրա: Տվյալներն այս փաստաթղթի համար ձևավորվել են 2018 թվականի ապրիլ-մայիս և օգոստոս ամիսներին, ինչպես նաև 2019 թվականի հունվար ամսին: Ազդեցության աստիճանի պատշաճ և ճշգրիտ գնահատման համար իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

ա. **Կադաստրային քարտեզի չափագրումներ**՝ ազդեցության ենթարկված հողատարածքների, շինության և մշակաբույսերի մակերեսները չափագրելու նպատակով;

բ. **ԱԵԱ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շարունակական խորհրդակցություններ**՝ ազդակիր հողերի սեփականատերերին, վարձակալներին և իրական հողօգտագործողներին պարզելու նպատակով;

գ. **Կորուստների գույքագրում**՝ օտարվող հողի, շինության, ծառերի, մշակաբույսերի, ցանկապատերի և բարելավումների բնութագրերը պարզելու և գնահատելու նպատակով;

դ. **Մարդահամար**՝ ԱԵՏՏ և դրանց անդամների, ներառյալ այնպիսի տարրական սոցիալական բնութագրերն, ինչպիսիք են սեռը, տարիքը, կրթությունը, զբաղվածությունը և այլն, ճշգրիտ քանակը պարզելու նպատակով;

ե. **Ազդակիր գույքի տեղափոխման ծախսերի գնահատում**՝ կորսված գույքի, եկամտի և այլ կենսապահովման միջոցների աղբյուրների և ֆինանսական հոսքերի փոխհատուցման արժեքների պարզում՝ Լրացում 1-ի բյուջեն կազմելու նպատակով:

2.2 Ազդեցության գնահատում

12. Փուլ 1-ի շրջանակներում հաղորդակցուղիների տեղափոխման հետևանքով առաջացած ազդեցություններ. Ազդեցության են ենթարկվել ընդհանուր առմամբ 80 հող՝ 20,315.38մ² ընդհանուր մակերեսով, որից 6,950.43մ² ընդհանուր մակերեսով 29 հողերը մասնավոր են, 12,625.18մ² ընդհանուր մակերեսով 49 հողեր համայնքային են, իսկ 739.77մ² ընդհանուր մակերեսով 2 հողեր պետության սեփականությունն են հանդիսանում (տե՛ս Աղյուսակ 2):

ա) **Մասնավոր հողեր**. Բոլոր 29 մասնավոր հողերն իրենց 56 (56 ԵԱՏՏ-ներից 54 ԱԵՏՏ-ները սեփականատեր են, իսկ 2 ԱԵՏՏ-ները՝ 2 մասնավոր պտղատու այգիների չգրանցված օգտատերեր:) ԱԵՏՏ-ներով գտնվում են Կոշ համայնքում: Մասնավոր հողերից 17-ը վարելահողեր են (3,587.59մ²), 9-ը հանդիսանում են պտղատու այգիներ (2,535.47մ²), որից 2-ն (725.01մ²) օգտագործվում են ապօրինի՝ 2 ԱԵՏՏ-ների կողմից, 1-ը հանդիսանում է արոտավայր (680.26մ²), 1-ը դասվում է այլ հողերի կարգին (138.11մ²), իսկ 1-ն առևտրային/կոմերցիոն նշանակության հող է (9մ²), որը ծառայում է որպես բաց տարածք հիմնական ճանապարհի և բիզնեսի (հյուրանոցի) միջև:

բ) **Համայնքային հողեր**. 49 համայնքային հողակտորներից 39-ը (10.929,14 մ²) գտնվում են Կոշ համայնքում, իսկ 10-ը (1.696,04մ²)՝ Շամիրամ համայնքում: Շամիրամում գտնվող 10 հողակտորներից 5-ը արոտավայրեր են (1,337.54մ²), իսկ մյուս 5-ը դասվում են այլ հողերի կատեգորիային (358.50մ²): Համայնքային այս հողակտորներից որևէ մեկը վարձակալության տրված չէ կամ չգրանցված օգտագործողի կողմից ապօրինի չի օգտագործվում: Կոշ համայնքի 39 համայնքային հողակտորներից 16-ը ճանապարհային հողեր են (850.52մ²), 15-ը դասվում են այլ հողերի կատեգորիային (8,298.17մ²), 2-ն արոտավայրեր են (588.73մ²), 3-ը վարելահողեր են (794մ²), 1-ն արդյունաբերական նշանակության է (274.33մ²), 1-ը՝ ենթակառուցվածքային նշանակության (95.99մ²), և 1-ը՝ ջրանցք/ ջրահուն է (27.4մ²): Համայնքային 39 հողակտորներից 5-ը վարձակալված են (1,566.83 մ²), որից 637.13մ² ընդհանուր մակերեսով 2 հողակտոր ապօրինի օգտագործվում է 2 չգրանցված ԱԵԱ-ների կողմից՝ որպես վարելահող

և այլ նշանակության հողեր: Բացի այդ, 4 հողակտոր ապօրինի օգտագործվում է 4 չգրանցված ԱԵԱ-ների կողմից, որոնցից 3-ը հանդիսանում են պտղատու ծառերով այլ հողեր, իսկ 1-ը՝ ճանապարհային հող՝ պտղատու և դեկորատիվ ծառերով (ինչպես նկարագրված է պարբերություն 13-ի (բ)-(դ) կետերում ստորև):

գ) **Պետական հողեր.** Ազդեցության է ենթարկվել 2 պետական հող՝ 739.77մ² մակերեսով: Մեկը գտնվում է Շամիրամում (16.5մ² արտավայր), իսկ մյուսը՝ Կոշում (723.27մ² արդյունաբերական նշանակության հող), որից 203.9 մ² ապօրինի օգտագործվում է 1 ԱԵՏՏ կողմից որպես իրավաբանական անձ (ինչպես նկարագրված է պարբերություն 13-ի (ե) կետում ստորև):

13. Ընդհանուր առմամբ, 8 ԱԵՏՏ-ներ ապօրինի օգտագործում են 9 հող, որոնցից.

ա) **2 ԱԵՏՏ օգտագործում են 2 մասնավոր սեփականություն հանդիսացող հող.** 1 հողի սեփականատերերը ՀՀ-ից դուրս են, իսկ մյուս հողի 3 սեփականատերերը ՀՀ-ից դուրս են, և 2-ն էլ ապրում են Երևանում: 2 ապօրինի օգտագործողներն էլ սեփականատերերի մտերիմ հարազատներն են (եղբայր և հորեղբայր) և նրանք օգտագործում են հողակտորները որպես պտղատու այգի և խաղողի այգի:

բ) **3 ԱԵՏՏ օգտագործում են 3 համայնքային հող,** որոնցից 2-ը այլ նշանակության են՝ պտղատու ծառերով և 1-ը ճանապարհային հող է՝ պտղատու և դեկորատիվ ծառերով:

գ) **1 ԱԵՏՏ օգտագործում է և՛ համայնքային սեփականություն հասնդիսացող, և՛ վարձակալված հողեր:** Առկա է բանավոր պայմանավորվածություն վարձակալի և ապօրինի օգտագործողի միջև հողօգտագործման վերաբերյալ: Համայնքային հողը այլ նշանակության հող է՝ պտղատու ծառերով, իսկ վարձակալված հողը՝ վարելահող է:

դ) **1 ԱԵՏՏ օգտագործում է 1 վարձակալված** այլ նշանակության մշակաբույսերով հող՝ վարձակալի հետ ունեցած բանավոր պայմանավորվածության հիման վրա:

ե) **1 ԱԵՏՏ օգտագործում է 1 պետական սեփականություն հանդիսացող հող:** Ապօրինի օգտագործողը իրավաբանական անձ է: «Աշտարակ քարհանք» ԲԲԸ-ն գործում է որպես քարհանք իր մասնավոր սեփական հողի վրա, բայց նրանք ունեն նաև օժանդակ կառույց, որը գտնվում է վարձակալված հողի սահմաններից դուրս և տեղակայված է նշված պետական սեփականություն հանդիսացող հողի վրա:

14. Չգրանցված/ապօրինի օգտագործող հանդիսացող բոլոր ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ՝ հիմք ընդունելով հողի զբաղեցման տարիների քանակը:

Աղյուսակ 2. Ազդեցություն հողերի վրա

Օգտագործման տեսակ	Մասնավոր հող		Համայնքային հող				Պետական հող		Ընդամենը		
	Սեփական		Համայնքի սեփ. հողեր		Համայնքի սեփ. և վարձ. հողեր		ՀՀ				
	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	ԱԵՏՏ
	N	մ ²	N	մ ²	N	մ ²	N	մ ²	N	մ ²	N
Ա. Կոշ											
Արոտավայր	1	680.26	2	588.73	-	-	-	-	3	1,268.99	1
Պտղատու այգի	9	2,535.47	-	-	-	-	-	-	9	2,535.47	25
Վարելահող	17	3,587.59	3	794.00	4	1,292.50	-	-	20	4,381.59	31
Ճանապարհ	-	-	16	850.52	-	-	-	-	16	850.52	1
Այլ	1	138.11	15	8,298.17	-	-	-	-	16	8,436.28	4
Կոմերցիոն/առևտրային	1	9	-	-	-	-	-	-	1	9.00	-
Արդյունաբերական	-	-	1	274.33	1	274.33	1	723.27	2	997.60	1
Ենթակառուցվածք	-	-	1	95.99	-	-	-	-	1	95.99	-
Ջուր	-	-	1	27.40	-	-	-	-	1	27.40	-
Ընդամենը Ա.	29	6,950.43	39	10,929.14	5	1,566.83	1	723.27	69	18,602.84	63
Բ. Շամիրամ											
Արոտավայր	-	-	5	1,337.54	-	-	1	16.50	6	1,354.04	-
Այլ	-	-	5	358.50	-	-	-	-	5	358.50	-
Ընդամենը Բ.	-	-	10	1,696.04	-	-	1	16.50	11	1,712.54	-
Ընդհանուր	29	6,950.43	49	12,625.18	5	1,566.83	2	739.77	80	20,315.38	63

15. Ազդեցության են ենթարկված նաև 2 արդյունաբերական հողակտորի վրա տեղակայված 226.52 մ² ընդհանուր մակերեսով երկու (2) քարե շինություն, որոնցից 79.09մ² օրինական է, իսկ 147.43մ² ապօրինի: Նշվածները հանքի օժանդակ կառույցներն են և ազդեցության են ենթարկվում Կոշում 10 ԿՎ էլեկտրահաղորդիչ գծերի էլեկտրասայան տեղադրմամբ պայմանավորված:

Աղյուսակ 3. Ազդեցությունը շինությունների վրա

Կառույցի/շինության տեսակը	Նյութը	Հ/կտ	Շինություն/Կառույց	Օրինական	Ապօրինի	Ընդամենը
		N	N	մ ²	մ ²	մ ²
Օժանդակ կառույց	Քար	2	2	79.09	147.43	226.52

16. Ազդեցության կենթարկվեն նաև պտղատու այգիներում և վարելահողերում ԱԵԱ-ների կողմից կատարված այլ բարելավումները, մասնավորապես 2 մասնավոր հողամասերում խաղող աճեցնելու նպատակով տեղադրված 6 բետոնե սյուները (պտղատու այգի) և 194 գծ/մ հաղորդալարը բետոնե սյունով՝ 4 հողամասերում, որոնցից 2-ը պտղատու այգիներ են, 1-ը՝ վարելահող, իսկ 1-ը՝ այլ նշանակության հող (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ազդեցությունը բարելավումների վրա

Տեսակը	Նյութը	Հ/կտ	Երկարությ.	N
		No	M	
Սյուն	Բետոնե	2	-	36
Լար և սյուն	Երկաթբետոնե	4	194	-
Ընդամենը		6	194	36

17. 2,187.41մ² ընդհանուր մակերեսով մշակաբույսեր ազդեցության են ենթարկվում 8 հողերում, որոնցից 1,234.62մ² առվույտ է, 588.71մ² կորնզան է, իսկ 341մ² էլակ: Մշակաբույսերի ընդհանուր կորուստը կազմում է 5,665.29կգ:

Աղյուսակ 5. Ազդեցությունը մշակաբույսերի վրա

Ցանքի/մշակաբույսի տեսակը	Տարեկան արտադրողական.	Ազդակիր տարածք	Ընդհանուր կորուստ
	կգ/ մ ²	մ ²	կգ
Ելակ	8.25	341.00	2,813.25
Առվույտ	1.94	1,257.70	2,439.94
Կորնզան	0.70	588.71	412.30
Ընդամենը	-	2,187.41	5,665.29

18. 18 հողամասերում առկա է ազդեցությանը ենթարկված 419 պտղատու ծառ, որոնցից 16-ը տնկիներ են, 65-ը՝ դեռևս ոչ բերքատու, իսկ 338-ը՝ բերքատու ծառեր են: Ամենատարածվածը խաղողն է (208), խնձորենիները (88), ընկուզենիները (58), ծիրանը (14) և տանձը (14):

Աղյուսակ 6. Ազդեցությունը պտղատու ծառերի վրա

Տեսակ	Տնկիներ	Դեռևս ոչ բերքատու	Բերքատու	Ընդամենը
	Ծառեր	Ծառեր	Ծառեր	Ծառեր
	No.	No.	No.	No.
Ա.Պտղատու թփեր				

Մասուր	-	7	-	7
Բ. Պտղատու ծառեր				
Դեղձ	-	-	8	8
Ընկույզ	-	36	22	58
Թուֆ	6	-	4	10
Խաղող	-	5	203	208
Խնձոր	-	2	86	88
Ծիրան	6	-	8	14
Շլոբ	-	-	7	7
Սալոր	1	1	-	2
Սերկևիլ	-	1	-	1
Տանձ	1	13	-	14
Պնդուկ	2	-	-	2
Ընդամենը	16	65	338	419

19. Ընդհանուր առմամբ, 5 հողամասում ազդեցության է ենթարկվել 39 փայտանյութ տվող ծառ, որոնցից 15-ը փոքր են, 13-ը՝ միջին չափսի, իսկ 11-ը՝ ամբողջովին հասուն: Տարբերակվել է փայտանյութ տվող ծառերի երեք տեսակ. ուռենի (35), թեղի (3) և ակացիա (1): Մեկ հողամասում ազդեցության է ենթարկվում երկու (2) վարդի թուփ (դեկորատիվ թփեր) (Տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա

Տեսակ	Փոքր (մինչև 12 սմ տրամագիծ)	Միջին (13- 22սմ տրամագիծ)	Ամբողջովին հասուն (22սմ+)	Ընդամենը
	No	No	No	No
Ակացիա	-	1	-	1
Թեղի	1	1	1	3
Ուռենի	14	11	10	35
Ընդամենը	15	13	11	39

2.3 Խիստ ազդակիր և խոցելի ԱԵՏՏ-ներ

20. Մարդահամարի արդյունքում հայտնաբերվել են 4 խոցելի ԱԵՏՏ-ներ: Մեկ ԱԵՏՏ աղքատ է, մյուսն՝ աղքատ և ղեկավարվում է կնոջ կողմից, իսկ 2-ը ղեկավարվում են կանանց կողմից: Բոլոր աղքատ ԱԵՏՏ-ները գրանցված են Ընտանիքների ապահովության գնահատման համակարգում (ԸԱԳՀ) (Տեղեկատվությունը ստուգվել է՝ հիմք ընդունելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում տեղադրված խոցելի ԱԵՏՏ-ների ցանկը): Բացի այդ, 7 ԱԵՏՏ-ներ խիստ ազդակիր են, քանի որ նրանք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10-ը կամ ավելի տոկոսը: Բոլոր խիստ ազդակիր ԱԵՏՏ-ները նախկինում նույնպես ենթարկվել են Ծրագրի ազդեցությանը: Խիստ ազդեցությանը ենթարկված ԱԵՏՏ-ներից ոչ մեկը խոցելի չէ:

2.4 Ազդեցությունների ամփոփում

21. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (ԱԵՏՏ-ներ) տարբեր կատեգորիաների և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ-ներ) թիվն ըստ ազդեցության տեսակների, ինչպես նաև կրկնակի

հաշվարկից զատ վերջնական թվերը ներկայացված են ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների ամփոփ Աղյուսակ 8-ում:
 Աղյուսակ 8. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների/ Անձանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝
 ըստ ազդեցության տեսակների

Ազդեցության կատեգորիա	Ազդեցության տեսակ		ԱԵՏՏ՝ ըստ ազդեց-ն տեսակի	ԱԵԱ՝ ըստ ազդեց-ն տեսակի	ԱԵՏՏ՝ առանց կրկնակի հաշվարկի	ԱԵԱ- ների զուտ քանակ	Նշումներ
	№	մ ² /գծ.մ.	№	№	№	№	
Ա1. Մասնավոր հող	29	6,950.43	56	123	56	123	-
Ա2. Համայնքային հող	49	13,917.68	8	27	7	21	1 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում
Ա3. Պետական հող	1	723.27	1	1	0	0	1 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Բ. Շինություն	2	79.09	1	1	-	-	ԱԵՏՏ-ն ներառված է Ա2-ում
Գ. Ցանկապատ	1	2	1	1	-	-	ԱԵՏՏ-ն ներառված է Ա1-ում
Դ. Բարելավումներ	36	214	15	37	-	-	14 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում ,1 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Ե. Մշակաբույսեր	-	2,771.97	8	26	-	-	5 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում 3 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Զ. Պտղատու ծառեր	427	-	35	75	-	-	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են Ա1 և Ա2-ում
Է. Փայտանյութ տվող ծառեր	39	-	8	25	-	-	
Ը. Դեկորատիվ ծառեր	2	-	1	6	-	-	
Թ. Խոցելի ԱԵՏՏ-ներ	-	-	4	12	-	-	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են Ա-ում
Ժ. Խիստ ազդակիր ԱԵՏՏ-ներ	-	-	7	27	-	-	5 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում 2 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Ընդամենը			-	-	63	144	-

2.5 Ազդակիր տնտեսությունների մարդահամար

22. ԱԵՏՏ-ների համընդհանուր պատկերը ստանալու նպատակով՝ 2018թ. սեպտեմբերի 3-ից 26-ը անցկացվել է մարդահամար: ԱԵՏՏ-ների ընդհանուր քանակը կազմում է 63 (144 ԱԵԱ). 63 (35 ԱԵՏՏ-ներ չեն ուսումնասիրվել, քանի որ 26 ԱԵՏՏ-ների անդամները գտնվում էին ՀՀ-ից դուրս և հասանելի չէին մարդահամարի համար, 1 ԱԵՏՏ նույնպես հասանելի չէր ուսումնասիրության համար, 8 ԱԵՏՏ-ների անդամները հրաժարվել էին պատասխանել հարցերին՝ հետևյալ պատճառաբանությամբ. ա) ես չեմ ցանկանում տրամադրել անձնական բնույթի տեղեկություններ, բ) ես կարևորություն չեմ տալիս այս ուսումնասիրությանը, և գ) ընդհանրապես դեմ եմ Ծրագրի իրականացմանը) ԱԵՏՏ-ներից մարդահամարում ընդգրկվել է միայն 28-ը (124 ԱԵԱ): Աղքատ ընտանիքների նույնականացումն իրականացվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում հրապարակված տվյալների հիման վրա: Այսպիսով բոլոր ԱԵԱ-ները, անկախ հետազոտման մեջ ընդգրկված լինելու կարգավիճակից, ստուգվել են հատ առ հատ: Հարցման չմասնակցած 35 ԱԵՏՏ-ներից 26-ը ՀՀ-ից դուրս են, նրանք այն հողերի համասեփականատերերն են, ովքեր իրենց ընտանիքների հետ մշտապես բնակվում են ՌԴ-ում: 8 ԱԵՏՏ հրաժարվել է մասնակցել հարցմանը՝ բանավոր հաստատելով իրենց ոչ խոցելի լինելը և որ չեն ցանկանում տրամադրել որևէ անձնական տեղեկատվություն: Միայն 1 ԱԵՏՏ անհասանելի է եղել հարցման համար: Այսպիսով, առավել խոցելի ԱԵՏՏ հայտնաբերելու հավանականությունը շատ փոքր է: Հենց որ անհասանելի և ՀՀ-ից դուրս գտնվող ԱԵՏՏ-ները հասանելի լինեն իրականացման փուլում, նրանց կտրամադրվի լրացուցիչ խորհրդատվություն: Իրականացման փուլի ընթացքում հորհրդատուն կնախաձեռնի կոնտակտային տվյալները և պահանջվող տեղեկությունները ձեռք բերելու գործողություններ՝ արտերկրում բնակվող ԱԵԱ-ների լրագրված անձանց միջոցով: Հարկ է նշել, որ ուսումնասիրված բոլոր ԱԵՏՏ-ները գտնվում են Կոշում, իսկ Շամիրամում ԱԵՏՏ-ներ չկան, քանի որ բոլոր ազդված հողերը համայնքային սեփականություն են հանդիսանում, և վարձակալված չեն կամ չեն օգտագործվում որևէ առանձին ՏՏ կողմից: Բոլոր ԱԵԱ-ները հայ են: Նրանցից մի կեսը կանայք են, իսկ մյուս կեսը՝ տղամարդիկ:

23. 28-ից 21 ԱԵՏՏ-ները ղեկավարում են հիմնականում 56-65, 66 և ավել տարիքային խմբերում ներկայացված տղամարդիկ: Ինչ վերաբերում է այդ տարիքային խմբերին, ապա 5 ԱԵՏՏ-ների ղեկավարները վարձու աշխատողներ են և չեն հասել կենսաթոշակային տարիքի, 6-ը՝ թոշակառուներ են, սակայն դեռ շարունակում են աշխատել, իսկ 6-ը՝ միայն թոշակառուներ: Տղամարդկանց կողմից ղեկավարվող մյուս 4 ԱԵՏՏ-ները ներկայացված են 18-35, 36-45 և 46-55 տարիքային խմբերում և պատկանում են ընտանիքի նույնեար տեսակին, որտեղ եկամտի հիմնական աղբյուրն ապահովում է տնային տնտեսության ղեկավարը: Մնացած 6 ԱԵՏՏ-ը մեծ ընտանիքներ են՝ այրիացած թոշակառուի կամ գործազուրկ մոր հետ, որը բնակվում է եկամտու հայթայթող և կերակրող որդիների, հարսների և թոռների հետ, իսկ 1-ը նույնեար ընտանիք է՝ գործազուրկ մոր և կերակրող որդու հետ:

Աղյուսակ 9. ԱԵՏՏ-ների տարիքային բաժանում՝ ըստ սեռի

Տարիք	Արական	Բզական	Ընդ.
18-35	1	-	1
36-45	2	-	2
46-55	1	-	1
56-65	14	4	18
66 և ավելի	3	3	6
Ընդամենը	21	7	28

24. Ընդհանուր առմամբ, 124 ԱԵԱ-ներից միայն 42-ն են (33,87%) աշխատում, որոնցից 10-ը զբաղվում են գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ և վաճառքով, 26 ԱԵԱ-ները վարձու

աշխատողներ են և կանոնավոր աշխատավարձ են ստանում, 2 ԱԵԱ ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում, 1 ԱԵԱ ինքնագրադրված է և 1 ԱԵԱ աշխատում է արտասահմանում: Մնացած 17 ԱԵԱ-ները (13,71%) կենսաթոշակառուներ են, 29 ԱԵԱ (23,39%)՝ գործազուրկներ են, որոնցից միայն 18-ն են աշխատանք փնտրում, 21 ԱԵԱ (16,94%) աշակերտներ են կամ ուսանողներ, և 15 ԱԵԱ (12,10%) չափահաս չեն և աշխատունակ տարիքի չեն:

Աղյուսակ 10. Զբաղվածության կարգավիճակը

Զբաղվածության կարգավիճակ	No.	%
Աշխատող	42	33.87%
Թոշակառու	17	13.71%
Աշակերտ/Ուսանող	21	16.94%
Գործազուրկ (աշխատանք չեն փնտրում)	11	8.87%
Գործազուրկ (աշխատանք են փնտրում)	18	14.52%
Կիրառելի չէ	15	12.10%
Ընդամենը	124	100.00%

25. Թվով 24 ԱԵՏՏ-ների միջին եկամուտը կազմում է 175,675.42 դրամ: 4 ԱԵՏՏ-ներն ունեն զգալիորեն ավելի բարձր եկամուտ, որը տատանվում է 410,000.00-ից 555,000.00 դրամի սահմաններում: Երկու բարձր եկամուտ ունեցող ԱԵՏՏ իրենց եկամուտները ստանում են հիմնականում գյուղատնտեսական գործունեությունից: Երկուսն էլ ունեն մրգատու ծառերով պտղատու այգիներ: Նրանք զբաղվում են միրգ-պտուղների արտադրությամբ և վաճառքով, սակայն նրանցից միայն մեկն է ենթարկվել խիստ ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական եկամտի 10% - ը: Մնացած 2 բարձր եկամուտ ունեցող ԱԵՏՏ-ներն եկամուտ են ստանում այլ աղբյուրներից (ԱԵՏՏ եկամտի մոտ մեկ երրորդը աշխատավարձի հաշվին է), որը հիմնականում ծառայում է որպես իրենց տնային կարիքները հոգալու միջոց: Հարկ է նշել, որ գյուղատնտեսական եկամուտների համեմատ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտը մեծ չէ և հավասարվում է աշխատավարձի: 1 ԱԵԱ ունի հացի փոռ և տարբեր տեսակի մրգերից օղի է թորում: Մեկ այլ ԱԵԱ ունի ավտոպահեստամասերի մի փոքր խանութ:

3. ՓՈՆԸԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ընդհանուր նկարագիր

26. ՀՕՏ-ի խնդիրները ՀՕՏ-ի սույն Լրացում 1-ի շրջանակներում կիրականացվեն համաձայն փոխհատուցման ստացման իրավագրության և իրավունքների շրջանակի, զուգահեռ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության և ԱԶԲ-ի 2009 թվականի ԱՄԲՓ (Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ)-ի՝ այնպես, ինչպես ներկայացված է Տրանշ 2-ի հաստատված ՀՕՏ-ով: Իրավունքների մատրիցան, որը վերաբերում է Լրացում 1-ի ազդեցություններին, բերված է ստորև՝ Աղյուսակ 11-ում: Ազդեցության որոշակի տեսակների և ԱԵԱ-ների որոշակի կատեգորիաների համար լրացուցիչ իրավունքներ, որոնք ավելացվել են ՀՀ Կառավարության կողմից, ևս ավելացվել են և հետևյալն են.

ա) Փոխհատուցման տրամադրում **ոչ բնակելի ապօրինի շինության համար** (ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի որոշմամբ). Վերականգնման օժանդակություն կտրամադրվի համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա ապօրինի շինություն կառուցած ԱԵԱ-ին՝ ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:

Օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵԱ-ներին, որոնք ի վիճակի չեն օրինականացնել այդ ազդեցության ենթարկվող շինությունները:

բ) **Տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը** կտրամադրվի այն ԱԵԱ-ներին, որոնք ֆիզիկապես չեն տեղափոխվում, բայց ունեն որոշակի գույք, որը ենթակա է տեղափոխման՝ անկախ այդ գույքի նկատմամբ գոյություն ունեցող ֆորմալ իրավունքներից: Տրանսպորտային ծախսերը ծածկելու համար կտրամադրվի դրամական փոխհատուցում:

գ) **Հաշմանդամ ԱԵԱ-ներին որպես խոցելի դիտարկելը.** 6 ամսվա նվազագույն աշխատավարձին համարժեք դրամական օժանդակություն և առաջնահերթություն՝ նախագծի հետ կապված աշխատանքի ընդունելիս:

դ) Ոչ բնակելի շենքեր-շինություններից/գույքից օգտվելու իրավունքից **բարելավումների առանձնացումը**, քանի որ, հայկական դարձվածաբանային ձևակերպմամբ, բարելավումները կառուցվածքային բնույթ չունեն, և դրանց ձևակերպումը չի համապատասխանում Հայաստանի օրենսդրությանը: Այլ բարելավումների դիմաց, որոնք ներառված չեն այդ իրավագործության մատրիցայում, սակայն գոյություն ունեն ազդակիր հողի վրա (բացառությամբ շարժական գույքի), կտրամադրվի դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով:

27. Գույքի, ներառյալ հողամասերի, շինությունների, ծառերի, մշակաբույսերի և այլ բարելավումների, գնահատումն իրականացվել է օտարման ամսաթվի դրությամբ՝ համապատասխան դրույքաչափերի և արժեքների հիման վրա:

Աղյուսակ 11. Իրավագործության մատրիցա

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
1.Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողի կորուստ	ԱԵՏՏ, որը կորցնում է գյուղատնտեսական հող՝ անկախ խիստ ազդեցությունից:	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով, գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%, կամ փոխանակում ԱԵԱ համար ընդունելի մեկ այլ հողով: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:	56
		Օրինականացման ենթակա անձ	Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները	0

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
		Համայնքային կամ պետական հողի վարձակալ	<p>Օրինականացվելու են և ստանալու են նույն փոխհատուցումը, ինչ՝ սեփականատերերը:</p> <p>Վարձակալը կփոխհատուցվի որպես լիարժեք սեփականատեր՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) + 15%, կամ կտրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, նրանք կստանան փոխհատուցում, որը հավասար է «ազդակիր հողամասի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) + 15%» հետևյալ համամասնություններով՝ ըստ վարձակալության տևողության. 1) <1 տարի 5%; 2) <15 տարի 14%; 3) <25 տարի 20%; 4) > 25 տարի 25%:</p>	2
		Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման օժանդակություն ազդեցության ենթարկված հողի շուկայան կամ կադաստրային արժեքի վրա (որն ավելի բարձր է)՝ հողի զբաղեցման տարիներին համամասնորեն՝ հետևյալ մասնաբաժիններով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ի չափով, 3)	8

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:	
2. Բնակելի շինություններ		Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ օրինական կարգավիճակից	Շենք, շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների և ապամոնտաժված շինանյութի, գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, գումարած վերանորոգման արժեքը:	0
		Վերաբնակեցվող վարձակալներ	Վերաբնակեցման և խիստ ազդեցության օժանդակությունները, ինչպես ստորև 9-րդ և 10-րդ իրավունքի կետերը:	0
3. Ոչ բնակելի շինություններ/գույք		ԱԵՏՏ-ներ վավեր գրանցումով	Շենք, շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների և ապամոնտաժված շինանյութի, գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է	1

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, գումարած վերանորոգման արժեքը:	
		ԱԵՏՏ-ներ առանց վավեր գրանցման	Ինչպես նշված է վերևում, բայց շենքի օրինականացումից/ գրանցումից հետո շենքի օրինականացման/ գրանցման դեպքերում:	
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:	Կիրառելի է
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք/ պետություն	Ազդեցության ենթարկված շինության վերակառուցում և դրա գործառույթների վերականգնում՝ համայնքի/ պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:	0
5. Մշակաբույսերի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից (ներառյալ իրավաբանական կարգավիճակ ստանալու ենթակա տերերը և բնակության կարգավիճակ չունեցող բնակիչները)	Մշակաբույսի փոխհատուցում՝ հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:	8
6. Ծառերի կորուստ	Ազդեցության ենթարկված ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի	36

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
		(ներառյալ իրավաբանական կարգավիճակ ստանալու ենթակա տերերը և բնակության կարգավիճակ չունեցող բնակիչները)	տեսակի, տարիքի և բերքատվության վրա	
7.Ձեռնարկատիրական գործունեության կամ զբաղվածության կորուստ	Ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության կորուստ	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ իրավաբանական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատերերը և բնակության կարգավիճակ չունեցող բնակիչները)	<p>Ձեռնարկատերեր</p> <p>1) մշտական ազդեցության դեպքում՝ 1 տարվա զուտ եկամտի կանխիկ հատուցում,</p> <p>2) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ամիսների քանակով՝ մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Գնահատումն իրականացվում է հիմնված հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ն կստանա վերականգնման օժանդակություն չհարկվող աշխատավարձի մաքսիմումի վրա՝ հաշվարկված ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակով՝ առավելագույնը մինչև 1 տարի: Մաքսիմում չհարկվող</p>	0

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			<p>աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին</p> <p>Մշտական աշխատողներ/ աշխատակիցներ. Փոխհատուցում, որը հավասար է. ա) աշխատանքի մշտական կորստի դեպքում 6 ամսվա նվազագույն աշխատավարձի. բ) Ժամանակավոր կորստի դեպքում՝ ամսական նվազագույն աշխատավարձին՝ աշխատատեղի կորստի ամիսների համար՝ մինչև 6 ամսվա համար</p>	
8. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	ԱԵՏՏ-ներ, որ կրել են գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսի կորուստ կամ վերաբնակեցում	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	<p>ա) 1 լրացուցիչ մշակաբույսի փոխհատուցում՝ 1 տարվա բերքի չափով այն ԱԵԱ-ների համար, ովքեր կրել են խիստ գյուղատնտեսական կորուստ</p> <p>բ) վերականգնման օժանդակություն 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների համար</p>	7
9. Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի/ տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ վարձակալները	1 ամսվա տրանսպորտային ծախսերը և կենսապահովման ծախսերը հոգալու համար գումարի տրամադրում	0
10. Օժանդակություն խոցելի անձանց		ԱԵՏՏ-ներ, որոնք աղքատության սահմանագծից	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական	4

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
		ցածր կենսամակարդակ ունեն կամ կանանց կամ տարեց անձանց կողմից են դեկավարվում	օժանդակության տրամադրում և Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց համար առաջնայնություն	
11. Ժամանակավոր ազդեցություններ		Բոլոր ԱԵՏՏ	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի համար	0
12. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿԵՆ կանդրադատնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը՝ ըստ վերոհիշյալ պայմանների	Կիրառելի չէ

3.2 Կորուստների փոխհատուցում

28. Մասնավոր հոդերի սեփականատերերին և համայնքին վճարման ենթակա փոխհատուցումը հաշվարկվել է որպես շուկայական արժեք գումարած 15%, ինչը համապատասխանում է Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենքին և Տրանշի 2-ի հաստատված ՀՕՏԾ-ին: Փոխհատուցման ընդհանուր արժեքը կազմում է 16,238,410.49 դրամ: Կոշի հողամասերի համար փոխհատուցումը կազմում է 15,348,873.19 դրամ, որից 9,435,304.52 դրամ գումարը կվճարվի մասնավոր հողի սեփականատերերին, իսկ 5,913,568.66 դրամ գումարը կտրամադրվի համայնքին: Շամիրամ համայնքին կվճարվի 889,537.31 դրամ:

Աղյուսակ 12. Փոխհատուցում մասնավոր և համայնքային հողերի դիմաց

Օգտագործման տեսակը	Կոշ					Շամիրամ					Ընդամենը				
	Հող	Ազդակիր տարածքը	Միավորի միջին զինը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցում (ներառյալ 15%)	Հող	Ազդակիր տարածքը	Միավորի միջին զինը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցում (ներառյալ 15%)	Հ/մ	Ազդակիր տարածքը	Միավորի միջին զինը	Ընդհանուր արժեքը	Ընդամենը փոխհատուցում (ներառյալ 15%)
	N	մ²	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր	N	մ²	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր	N	մ²	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր
Մասնավոր															
Արոտավայր	1	680.26	375	255,097.50	293,362.13	-	-	-	-	-	1	680.26	375	255,097.50	293,362.13
Պտղ. այգի	9	2,535.47	2,265	5,742,839.55	6,604,265.48	-	-	-	-	-	9	2,535.47	2,265	5,742,839.55	6,604,265.48
Վարելահող	17	3,587.59	587	2,105,915.33	2,421,802.63	-	-	-	-	-	17	3,587.59	587	2,105,915.33	2,421,802.63
Այլ	1	138.11	375	51,791.25	59,559.94	-	-	-	-	-	1	138.11	375	51,791.25	59,559.94
Կոմերց/Առևտր	1	9.00	5,441	48,969.00	56,314.35	-	-	-	-	-	1	9.00	5,441	48,969.00	56,314.35
Ընդամենը	29	6,950.43	-	8,204,612.63	9,435,304.52	-	-	-	-	-	29	6,950.43	-	8,204,612.63	9,435,304.52
Համայնքային															
Արոտավայր	2	588.73	375	220,773.75	253,889.81	5	1,337.54	307	501,577.50	576,814.13	7	1,926.27	375	722,351.25	830,703.94
Վարելահող	3	794.00	587	466,078.00	535,989.70	-	-	-	-	-	3	794.00	587	466,078.00	535,989.70
Ճանապարհ	16	850.52	348	295,980.96	340,378.10	-	-	-	-	-	16	850.52	348	295,980.96	340,378.10
Այլ	15	8,298.17	375	3,111,813.75	3,578,585.81	5	358.50	759	271,933.20	312,723.18	20	8,656.67	391	3,383,746.95	3,891,308.99
Արդյունաբերական/յունաբեր	1	274.33	2,856	783,486.48	901,009.45	-	-	-	-	-	1	274.33	2,856	783,486.48	901,009.45
Ենթակառուցվածք	1	95.99	2,652	254,565.48	292,750.30	-	-	-	-	-	1	95.99	2,652	254,565.48	292,750.30
Ջուր	1	27.40	348	9,535.20	10,965.48	-	-	-	-	-	1	27.40	348	9,535.20	10,965.48
Ընդամենը	39	10,929.14	-	5,142,233.62	5,913,568.66	10	1,696.04	-	773,510.70	889,537.31	49	12,625.18	-	5,915,744.32	6,803,105.97
Ընդհանուրը	68	17,879.57	-	13,346,846.25	15,348,873.19	10	1,696.04	-	773,510.70	889,537.31	78	19,575.61	-	14,120,356.95	16,238,410.49

29. Վարձակալների փոխհատուցումը հաշվարկվել է՝ ելնելով ազդեցության ենթարկված հողամասի շուկայական արժեքից և ավելացվել 15%-ով՝ ելնելով վարձակալության մնացած տարիների հետ կապված հետևյալ համամասնություններից. 1) < 1 տարի - 5%; 2) < 15 տարի - 14%; 3) < 25 տարի - 20%; 4) > 25 տարի - 25%: Թվով 5 վարձակալներին վճարման ենթակա փոխհատուցման ընդհանուր գումարը կազմում է 347,402.66 ՀՀ դրամ (տե՛ս Աղյուսակ 13):

306 3	3063	Կո2	02-061-0130-0038	Մասնավոր	Մասնավոր հողի ինքնական օգտագործում	97.9	Պտղատու այգի			Մետաղական լար բետոնե սյուներով	մետաղ , բետոն	36	Մրգատու	բերքատու	3	4	8		
	Փայտանյութ												փոքր	1					
	Փայտանյութ												միջին	1					
306 4	3063/5-3064	Կո2	02-061-0130-0033	Մասնավոր	Օգտագործվում է սեփականատիրոջ կողմից	9	Պտղատու այգի						Մրգատու	բերքատու	2	Նույնը, ինչպես 3063/5-ում	Նույնը, ինչպես 3063/5-ում		
306 5	3065	Կո2	02-061-0127-0022	Մասնավոր	Օգտագործվում է սեփականատիրոջ կողմից	16.15	Վարելահող									3	5		
	3065-1																		
	3065-2																		
306 6		Կո2	02-061-0127-0026	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	9	Այլ հողեր												

ID	ԱԵՏՏ ID	Համայնք	Ծածկագիր	Ազդեցության ենթակա հողեր				Ազդեցության ենթակա կառույցներ		Ազդեցության ենթակա բարելավումներ			Ազդեցության ենթակա ծառեր			Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ			
				Սեփականատերը	Օգտագործման կարգավիճակը	Մակերեսը, մ ²	Հողի կատեգորիան՝ ըստ փաստացի օգտագործման	Շինության անվանումը	մ ²	Բարելավման անվանումը	Նյութը	զմ, հատ	Պտղատու ծառի տեսակը	Ենթատեսակը	Քանակ/ մ ²	Խոցելիության կարգավիճակ	Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ների քանակը	ԱԵՏՏ անդամների քանակը
3067	3067	Կոշ	02-061-0127-0024	Մասնավոր	Օգտագործվում է սեփականատիրոջ կողմից	76.3	Վարելահող											1	1
3068		Կոշ	02-061-0127-0002	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	265.33	Այլ հողեր												
3069		Կոշ	02-061-0127-0001	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	233.21	Արոտավայր												
3070		Շամիրամ	02-081-0120-0055	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	45	Արոտավայր												
3071		Շամիրամ	02-081-0119-0060	ՀՀ	ՀՀ անմիջական տիրապետության տակ	16.5	Այլ հողեր												
3072		Շամիրամ	02-081-0237-0001	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	82.58	Այլ հողեր												
3073		Շամիրամ	02-081-0122-0100	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	50.08	Արոտավայր												
3074		Շամիրամ	02-081-0119-0044	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	6.78	Այլ հողեր												
3075		Շամիրամ	02-081-0167-0001	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	610.53	Արոտավայր												
3076		Շամիրամ	02-081-0108-0023	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	245.25	Այլ հողեր												
3077		Շամիրամ	02-081-0245-0001	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	7.73	Այլ հողեր												
3078		Շամիրամ	02-081-0282-0001	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	16.16	Այլ հողեր												
3079		Շամիրամ	02-081-0129-0002	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	505.57	Արոտավայր												

ID	ԱԵՏՏ ID	Համայնք	Ծածկագիր	Ազդեցության ենթակա հողեր				Ազդեցության ենթակա կառույցներ		Ազդեցության ենթակա բարելավումներ			Ազդեցության ենթակա ծառեր			Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ			
				Սեփականատերը	Օգտագործման կարգավիճակը	Մակերեսը, մ ²	Հողի կատեգորիան՝ ըստ փաստացի օգտագործման	Շինության անվանումը	մ ²	Բարելավման անվանումը	Նյութը	զմ, հատ	Պտղատու ծառի տեսակը	Ենթատեսակը	Քանակ/ մ ²	Խոցելիության կարգավիճակ	Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ների քանակը	ԱԵՏՏ անդամների քանակը
3080		Շամիրամ	02-081-0107-0042	Համայնքային	Համայնքի անմիջական տիրապետության տակ	126.36	Արոտավայր												

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Մանրամասն չափագրման հետազոտության, մարդահամարի, USՀ գնահատման մեթոդաբանություն

1. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1.1 Մարդահամար

Մարդահամարի նպատակն է ապահովել ազդեցության ենթակա տնային տնտեսությունների մանրամասն նկարագրությունը՝ սեռը, տարիքը, էթնիկ խումբը, կրթությունը, ամուսնական և զբաղվածության կարգավիճակը: Պատարաստվել են այն ԱԵԱ-ների ցուցակները, որոնց հետ անցկացվել են հարցազրույցներ, ովքեր մարդահամարի ժամանակ ներկա չեն եղել, ովքեր հրաժարվել են մասնակցել հարցազրույցին: Խոցելի ՏՏ-ների ցուցակը կազմվել է USՀ տվյալների հիման վրա: Բոլոր ԱԵՏՏ-ների ցուցակը՝ անձնական տվյալներով (անձնագիր, սոցիալական քարտ, գրանցման հասցե և այլն), պատրաստվել և ստուգվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների բազայի միջոցով՝ «Ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում» (ԸԽԳՀ) գրանցված աղքատ ՏՏ-ներին բացահայտելու համար:

Առնվազն ևս երկու այցելություն է կատարվել, եթե ԱԵԱ-ն բացակա է եղել տնային տնտեսություններ կատարած այցելությունների ժամանակ, կամ հարցազրույց է անցկացվել կողակցի կամ ՏՏ չափահաս անդամի հետ՝ ազդեցության ենթակա ՏՏ վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար:

1.2 Սոցիալ-տնտեսական հետազոտություն (USՀ)

USՀ-ի նպատակն է նկարագրել ԱԵՏՏ-երի՝

- (i) սոցիալ-տնտեսական վիճակը,
- (ii) եկամտուններն ու ծախսերը, գյուղատնտեսական հողերի օգտագործումը՝ առանձնացված ըստ հողի իրավական կարգավիճակի (սեփականություն, վարձակալված կամ չձևակերպված հիմունքներով օգտագործվող հողեր)
- (iii) գենդերային մասնակցությունը և սոցիալական ծառայությունների ու ենթակառուցվածքների հասանելիությունը:

Պատրաստվել է ազդեցության ենթակա գույքի/ակտիվների ցուցակը՝ ըստ կադաստրային լուս-կողի, գույքի հասցեի, սեփականատերերի, վարձակալների, ինքնակամ օգտագործողների անունների, պայմանագրի տվյալների և կորուստների տեսակների: Այս առաջադրանքն իրականացվել է տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ: Ազդեցության ենթարկված իրավաբանական անձանց (օրինակ՝ համատեղ ձեռնարկություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, գործընկերություն, կոոպերատիվ և այլն) դեպքում, ձեռք է բերվել իրավաբանական անձի գործունեության, անդամակցության և կառուցվածքի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը:

ԱԵՏՏ-ներն իրագեկվել են Ծրագրի վերաբերյալ, և նրանց տրամադրվել են տեղեկատվական ձեռնարկների օրինակները՝ ԱԵԱ-ների իրավունքների և Ծրագրի վերաբերյալ իրագեկվածությունը բարձրացնելու համար: ԱԵԱ-ների հարցերն ու արձագանքներն արձանագրվել են, ինչպես նաև

տրամադրվել են կոնսակտային անձի տվյալները՝ բողոքների և հարցերի դեպքում դիմելու նպատակով:

ՄՏՀ-ն իրականացվել է քանակական մեթոդների կիրառմամբ՝ 78.28% հասանելի ԱԵՏՏ-ների ընդհանուր պատկերը ստանալու համար:

1.3 Քանակական հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունը ներառել է սեփականատերերին, վարձակալներին, չձևակերպված օգտագործողներին, մշտական ազդեցության ենթարկվող ձեռնարկատիրական գործունեությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև աշխատակիցներին: ՄՏՀ հարցաթերթիկները լրացվել են ընտանիքի ամենաիրազեկված անդամի կողմից: Հարցազրույցն անցկացվել է ԱԵՏՏ-ների հետ, որոնք ունեն համապատասխան կորուստ՝ համաձայն հետևյալ 4 հարցաթերթիկի:

- (i) ԱԵՏՏ հարցաթերթիկ՝ ազդեցության ենթակա հողերի, շենքերի և այլ ակտիվների/գույքի սեփականատերերի, վարձակալների և օգտագործողների համար,
- (ii) ԱԵՏՏ հարցաթերթիկ՝ ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունում աշխատանքը կորցնող ԱԵՏՏ-ների համար,
- (iii) ԱԵՏՏ հարցաթերթիկ՝ ազդեցության ենթարկված ձեռնարկատիրական գործունեություն կորցրած պատասխանողների համար:

Բոլոր հարցաթերթիկները ստուգվել են հաջորդ օրը՝ դաշտից վերադառնալուց հետո: Բացահայտված անհամապատասխանությունները ստուգվել են պատասխանողին զանգահարելու միջոցով: Մուտքագրվել են միայն այն հարցաթերթիկները, որոնք տրամաբանական ստուգում են անցել:

Տվյալների մուտքագրումը կատարվել է «Excel» ծրագրով: Տվյալների մաքրման գործընթացում բացահայտված յուրաքանչյուր անհամապատասխանություն ուղղվել է՝ ըստ հարցաթերթիկի տվյալների: Մուտքագրված տվյալները վերլուծության են ենթարկվել «Excel» ծրագրով, և արդյունքներն ամփոփող աղյուսակները պատրաստվել են նախապես սահմանված ձևաչափերով՝ իրականացման համար պատրաստ Լրացման մեջ օգտագործելու նպատակով:

Կիրառվել է ՃԴ-ի կողմից տրամադրված մարդահամարի և ՄՏՀ հարցաթերթիկների ձևաչափը՝ անհրաժեշտության դեպքում ոչ զգալի խմբագրումներով:

2. մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՂՀ)

ՄՂՀ գործընթացը ներառել է հետևյալ քայլերը, որոնք թույլ են տվել ապահովել են արդյունքների ճշգրտությունը.

1. Ճանապարհի նախագծի տեղադրումը կադաստային քարտեզի վրա՝ ազդեցության ենթակա գույքի կադաստրային կողը բացահայտելու և ազդեցության ենթակա գույքի ցանկը կազմելու համար,
2. Փաստացիորեն ազդեցության ենթարկված գույքի փաստացի չափագրում, ներառյալ՝ գրանցված և ինքնական օգտագործվող գույքը,
3. Վերլուծություն՝ կադաստրի, փաստացի չափագրման տվյալների և սեփականության վկայականի տվյալների համեմատության միջոցով: Բացահայտված խնդիրներն ու անհամապատասխանությունները առաջարկվող լուծումներով ամփոփ ներկայացվել են Լրացման համապատասխան գլխում և Հավելված 8-ում:

Եթե ստացված չափագրման տվյալները համապատասխանել են ԿՊԿ-ի կողմից տրված սեփականության վկայականի պարամետրերին (հաշվի առնելով ԿՊԿ-ի կողմից սահմանված շեղումների թույլատրելի չափը), ապա կազմվել են գույքային հատակագծեր ԿՊԿ ներկայացնելու համար:

Եթե ստացված չափագրման տվյալները չեն համապատասխանել ԿՊԿ-ի կողմից տրված սեփականության վկայականում նշված պարամետրերին (հաշվի առնելով շեղումների թույլատրելի չափը), ապա Պատվիրատուին, Շահառուներին և ԱԵԱ-ներին տրամադրվել է խորհրդատվություն կադաստրային ուղղումների գործընթացի նախաձեռնման և իրականացման վերաբերյալ: ԱԵԱ-ի կողմից ցանկություն հայտնելու դեպքում նոր հատակագիծ է կազմվել ԱԳԿՊԿ ներկայացնելու համար: Սեփականության վկայականում համապատասխան ուղղումից հետո, գույքի օտարման պայմանագիր կնքելուց առաջ, անշարժ գույքի վերաձևակերպման համար վերջնական հատակագիծ է կազմվել՝ ԿՊԿ ներկայացնելու նպատակով: Եթե հնարավոր չի եղել կադաստրային ուղղումները կատարել Լրացման պատրաստման փուլում, ապա ՄՉՀ արդյունքների հիման վրա այս դեպքերն ընդգրկվել են կադաստրային ուղղումների պլանում, որը մշակվել և ներառվել է իրականացման ենթակա վերջնական Լրացման մեջ:

Եթե Լրացման պատրաստման և իրականացման ընթացքում որոշում է կայացվել ազդեցության ենթակա մասի փոխարեն գույքն ամբողջությամբ օտարելու վերաբերյալ, ապա անհրաժեշտության դեպքում, կպատրաստվի ամբողջական գույքի համապատասխան հատակագիծը/քարտեզը:

2.1 Չափագրման ընթացակարգը

Չափագրումներն իրականացվել են ԱԵԱ-ների ներկայությամբ: ԱԵԱ-ները չափագրման օրվա և ժամի մասին տեղեկացվել են հեռախոսով՝ տեղանքային այցելությունից մեկ օր առաջ: Եթե հնարավոր չի եղել ապահովել նրանց ներկայությունը, ապա աշխատանքներն իրականացվել են ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցությամբ: Սույն ընթացակարգն ապահովել է ԱԵԱ-ների և ՏԻՄ-երի կողմից չափագրման գործընթացի վերահսկումը:

2.1.1 Հողակտորների չափագրման ընթացակարգը

Հողամասերի չափագրման համար կիրառվել են հետևյալ քայլերը՝

- (i) Հողամասի սահմանները գծագրվել են,
- (ii) Հողամասի բոլոր հատվածները՝ ներառյալ շրջադարձային կետերը, կոորդինատները, սահմանագծերի բեկման կետերը նշվել, համարակալվել և արձանագրվել են,
- (iii) Սեփականատերերի անունները, ազգանունները (և սեփականության իրավունքը, եթե հայտնի են) արձանագրվել են:

Եթե տարածքը ցանկապատված էր, չափագրման համար ցանկապատի սահմանագիծն է հաշվի առնվել: Ցանկապատի բացակայության պարագայում հողամասի սահմանները հաստատվել են հողամասն օգտագործող ԱԵԱ-ների/ՏԻՄ-երի կողմից:

2.1.2 Շինությունների չափագրում

Շինությունները չափագրվել են հետևյալ քայլերով՝

- (i) Շինությունները չափագրվել են թե՛ արտաքին (շինության դրսից), թե՛ ներքին (շինության ներսից) կողմերից: Արտաքինից չափագրված շինության ուրվապատկերը գծագրվել է՝ ըստ հողամասում գտնվելու տեղադրության: Այնուհետև շինությունների ներսում գտնվող տարածքներն են չափագրվել: Ներքին չափագրումները կատարվել են շինությունների հատակից 1,20-1,30 մետր բարձրությամբ: Այն դեպքում, երբ երկու առանձին շինություններ ունեն մեկ ընդհանուր տանիք և մեկ արտաքին պատ, երկու շինություններն էլ չափագրվում և գնահատվում են՝ համարվելով ազդեցության ենթակա:
- (ii) Չափագրվել են յուրաքանչյուր տարածքի երկարությունը, լայնությունը, ներքին բարձրությունը, ինչպես նաև կրող պատերի և միջնապատերի հաստությունները: Նշագրվել է դռների և պատուհանների տեղադրությունը: Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները, ինչպես նաև բազմաբնակարան շենքում գտնվող ոչ բնակելի տարածքները, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտները չափագրվել են միայն ներքին չափերով: Չափագրվել են նաև պարիսպները և հողամասի վրա գտնվող բարելավումները:

2.2 Գույքի քանակական և որակական հաշվառում

Հողամասերը և դրանց վրա կառուցված շինությունները նկարագրվել են քանակական և որակական տեսանկյունից.

- (i) քանակական տվյալները ներառել են երկարությունը, լայնությունը, բարձրությունը, մակերեսները և ծավալները,
- (ii) որակական տվյալները ներառել են հողամասի գործառնական նշանակությունը (հողամասեր) և հողամասի փաստացի օգտագործումը: Արձանագրվել են շինությունների փաստացի օգտագործումը, կառուցման տարեթիվը, արտաքին հարդարումը, ավարտվածության աստիճանը, շինանյութի տեսակները (պատեր, միջհարկային ծածկ, տանիք) և այլ բնույթի տվյալներ:

2.3 Չափագրման արդյունքները

Ազդեցության ենթակա յուրաքանչյուր գույքի համար պատրաստվել է հատակագիծ/քարտեզ՝ համաձայն ԿՊԿ նախագահի 2011 թ. հոկտեմբերի 20-ի թիվ 283 հրամանի (անշարժ գույքի չափագրման (գրանցման) վերաբերյալ հրամանը, այսուհետ՝ Հրաման) հավելված 1-ի պահանջների: Քարտեզները տրամադրվել են Պատվիրատուին PDF և AutoCad ձևաչափերով՝ սկավառակի վրա և 2 թղթային տարբերակով: Վարձակալված հողերի դեպքում տրամադրվել/կցվել է առանձին հատակագիծ/քարտեզ, որը ցույց է տալիս օտարման ենթակա վարձակալված/ օգտագործված մասերի հարաբերակցությունը, ինչպես նաև գույքի յուրաքանչյուր մասի՝ ընդհանուր վարձակալված և ազդեցության ենթակա մասերի հատակագիծը/քարտեզը:

3. կորուստների գույքագրումը

3.1 Անշարժ գույքի տեղագնում

Հողերի և շինությունների հիմնական հատկանիշներն արտացոլող հետազոտության ձևաթղթերը լրացվել են գնահատողի կողմից՝ պարզ ակնադիտական տեղագնման և ԱԵԱ-ների հետ անցկացված հարցումների հիման վրա:

Ընդգրկված են հետևյալ նկարագրությունները.

- (i) Գույքի ընդհանուր բնութագիրը

- ենթակառուցվածքների առկայությունը, այդ թվում՝ խմելու ջրի, էլեկտրական հոսանքի, կոյուղու, հեռախոսագծերի, բնական գազի և այլնի առկայությունը,
- հիմնական ծառայություններին հասանելիության հնարավորությունը, այդ թվում՝ մետրոյից, ամոնացապահական հաստատություններից և առևտրային սրահներից հեռավորությունը,
- ճանապարհի առկայությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի գնահատումը,
- Ազդեցության ենթակա հողի և գույքի իրավական կարգավիճակը, զբաղեցման/տիրապետման ժամանակահատվածը և սեփականությունը,
- Արդյո՞ք ազդեցության ենթակա գույքը եկամտի հիմնական աղբյուրն է:

(ii) Հողամասի բնութագիրը

- նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը,
- իրավունքի տեսակը, օր.՝ սեփականություն հանդիսացող, վարձակալված կամ չձևակերպված
- լայնությունը, երկարությունը և երկրաչափական կառուցվածքը
- տրանսպորտի առկայությունը և երկաթգծին հասանելիությունը,
- դիրքը, տեղադրությունը, քարքարոտությունը և այլն
- բարելավումների առկայությունը և նկարագրությունը:

(iii) Շինությունների և բարելավումների նկարագրությունը

- շինության անվանումը, նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը
- ենթակառուցվածքների առկայությունը
- հիմքի, միջհարկային ծածկերի, արտաքին պատերի համար օգտագործված նյութերը
- դռների և պատուհանների առկայությունը
- տեղափոխման ենթակա կահույքի և կենցաղային իրերի առկայությունը և այլն

Եթե արձանագրված բարելավումների մեջ կան հաղորդակցուղիներ (ջրատար, գազատար, կոյուղի, էլ. հոսանք և այլն), ապա նախ Պատվիրատուի միջոցով ստուգվել է դրանց պատկանելությունը, ինչպես նաև ստուգվել է՝ արդյոք դրանք արդեն ներառված չեն հաղորդակցուղիների տեղափոխման նախագծում՝ կրկնակի վճարումից խուսափելու համար:

Այս փուլում իրականացվում էր գույքերի ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ կամ անշարժ լինելու կարգավիճակի որակումը: Անշարժ են որակվել այն գույքերը, որոնք անհնար է հողամասից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու: Մնացած գույքերը համարվել են ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ:

Այս փուլում իրականացվել է հողամասերի, ինչպես նաև արտաքին և ներքին շինությունների ֆոտոլուսանկարումը: Բոլոր տեղագնման ձևաթերթերը լրացվել և ստորագրվել են ԱԵԱ-ների (կամ օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման հիմքերով լրագրված ներկայացուցիչների) և գնահատողի կողմից:

Որոշվել են այլ տեսակի կորուստների տեսակը և քանակը, օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող կամ այլ եկամուտները, աշխատանքից կամ այլ արտադրողական ակտիվներից, հարկային հայտարարագրերի հիման վրա գնահատված ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող ամսական գուտ եկամուտը:

ԱԵԱ-ներն առանձնացվել են՝ ըստ կորստի տեսակի (հող, շինություն, մշակաբույս, ծառեր, ձեռնարկատիրական գործունեություն և այլն), այդ թվում նրանք, ովքեր կորցնում են իրենց եկամուտ ստեղծող գույքի 10%-ը կամ ավելին, կամ ենթակա են ֆիզիկական տեղահանման: Գույքագրումը կատարվել է ինչպես գույքի ազդեցության ենթակա մասի, այնպես էլ ամբողջական գույքի համար (հնարավոր դեպքերում):

3.2 Մշակաբույսեր և ծառեր

Որակավորում և փորձառություն ունեցող գյուղատնտեսը հաշվառել է առկա ծառերը և մշակաբույսերը հողամասի ազդեցության ենթակա հողամասերում (ըստ չափանիշների՝ տեսակի, տարիքի, բնի հաստության և այլն): Հաշվառվել են բոլոր մշակաբույսերը, թփերը, պտղատու, դեկորատիվ, ինչպես նաև փայտանյութ տվող ծառերը:

3.2.1 Պտղատու ծառեր ու թփատեսակներ

Պտղատու ծառերի տարիքը որոշվել է փորձառու գյուղատնտեսի փորձագիտական կարծիքի հիման վրա:

3.2.2 Փայտանյութ տվող ծառեր

Գյուղատնտեսը չափել է փայտանյութ տվող ծառերի բարձրությունը և բնի հաստությունը:

4. Նկարագրության արձանագրությունների պատրաստումն ու ստորագրումը

Ազդեցության ենթակա գույքի և հողակտորների նկարագրության արձանագրությունները կազմվում են Մանրամասն չափագրման հետազոտության, գույքագրման և մարդահամարի միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա՝ ՀՀ կառավարության N 1275-Ն, սեպտեմբերի 16, 2010 թ. որոշմամբ հաստատված ձևաչափով: Արձանագրությունները պատրաստվել են և՛ օրինական, և՛ չձևակերպված գույքերի համար:

Նկարագրությունների արձանագրությունների ստորագրման գործընթացը կազմակերպվել է ԱԵԱ-ների հետ, այդ թվում՝ սեփականատերերի, վարձակալների, չձևակերպված վարձակալների հետ և այլն: Որևէ տեսակի անհամապատասխանության դեպքում ԱԵԱ-ներին ներկայացվել է թարմացված նկարագրության արձանագրությունը վերաստորագրման համար:

Նկարագրության արձանագրությունները ավտոմատ կերպով լրացվել են Ծրագրի շրջանակում մշակված հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, արձանագրություններում առկա տվյալները նույնական են Լրացման մեջ ներկայացված տվյալների, ինչպես նաև Լրացման իրականացման մոնիտորինգի ժամանակ օգտագործվող տվյալների բազայի հետ: Արդյունքների ներկայացման ձևաչափը լրացուցիչ քննարկվել է ՏԾԻԿ-ի հետ:

Այն դեպքերում, երբ հնարավոր չի եղել հանդիպել սեփականատիրոջ/օգտագործողի/վարձակալի հետ, պատրաստվել է ակտ՝ արձանագրության/նկարագրության ստորագրման ձախողման մասին, որտեղ նշվել է ձախողման պատճառը:

Նկարագրության արձանագրությունների ստորագրման գործընթացը սկսվել է ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, և համապատասխան ծանուցումն ուղարկվել է ԱԵԱ-ներին:

5. ԽԻՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Խիստ ազդեցության համար դրամական օժանդակություն տրամադրվում է ազդեցության ենթակա այն ԱԵՏՏ-ներին (ներառյալ՝ վարձակալներին և հողի փաստացի օգտագործողներ

հանդիսացող ԱԵՏՏ-ներին), որոնց պատկանող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ն ազդեցության է ենթարկվում և տվյալ հողամասի օգտագործման արդյունքում տվյալ ԱԵՏՏ-ները ստանում են օգուտներ՝ պտուղների, բերքի, մշակաբույսերի տեսքով:

Վերոհիշյալ օժանդակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում հողերի փաստացի գործառնական նշանակությունը՝ անկախ անշարժ գույքի կադաստրային տվյալներում, իրավունքի գրանցման վկայականներում և իրավունքը հաստատող այլ փաստաթղթերում հողակտորի համար սահմանված նշանակությունից:

Այն դեպքում, երբ 10 և ավելի տոկոսով ազդեցության ենթակա հողակտորը չունի գյուղատնտեսական նշանակություն, սակայն փաստացի օգտագործվում (մշակվում) է որպես գյուղատնտեսական հողամաս, և որի վրա փաստացի առկա է բերք/մշակաբույս, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման՝ վերոհիշյալ սկզբունքների համաձայն՝ առանց օրինականացման պահանջի ապահովման:

6. Գնահատում և Լրացման բյուջեի սահմանում

6.1 *Գործընթացը կարգավորող փաստաթղթերը*

Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.

- (i) Ասիական զարգացման բանկի Անվտանգության մեխանիզմների քաղաքականություն 2009թ., Ծրագրի համար մշակված և ՀՕՏԸ-ում ներկայացված Իրավունքների սխեմա (ՀՕՏԸ՝ ՀՀ կառավարության N 1274-Ն առ16.09.2010թ. որոշման, Հավելված N 3)
- (ii) 2005 թվականի հոկտեմբերի 1-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-189-Ն)
- (iii) Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ
- (iv) ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008 թվ. «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների, ինչպես նաև շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» թիվ 09-Ն հրաման
- (v) Շուկայական պայմաններում նմանատիպ շենքերի և շինություններ կառուցման համար շինարարության պայմանագրերում նշված արժեքների վերաբերյալ տեղեկանքներ:

6.2 *Կադաստրային անհամապատասխանություններ ունեցող հողակտորների գնահատումը*

Սեփականության վկայականի և կադաստրային վկայականի միջև անհամապատասխանությունների դեպքում (մակերեսը, նպատակային նշանակությունը կամ փաստացի օգտագործման նպատակը և այլն) հողակտորների գնահատումը կատարվել է հետևյալ սկզբունքով. եթե առկա է սեփականության վկայական, գնահատումը կատարվել է վկայականի տվյալների հիման վրա, հակառակ դեպքում՝ գնահատման հիմք են հանդիսացել կադաստրային քարտեզի տվյալները:

6.3 *Գնահատման շրջանակը*

Ծրագրի շրջանակներում գնահատվել են՝

- Ազդեցության ենթակա ակտիվները՝ հողերը, շենքերը, շինությունները և բարելավումները, որոնք գտնվում են ազդեցության ենթակա հողի՝ օտարվող և ընդհանուր վրա,
- Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող ծառերը, թփերը, մշակաբույսերը:

Ակտիվների գնահատման կիրառված մեթոդաբանությունը ներկայացված է ստորև:

6.3.1 Հողի գնահատման մեթոդաբանությունը

Ընդհանուր մոտեցում

ՀՕՏՇ-ի սկզբունքների համաձայն՝ ազդեցության ենթակա հողի դիմաց փոխհատուցում կստանան հողամասի սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման: Յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է փոխհատուցման հաշվարկի հատուկ մոտեցում: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև:

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցում

Հողի կորուստ	ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ-ի համար ընդունելի մեկ այլ համարժեք հողով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ	Օրենսդրությամբ սահմանված ղեպքերում՝ ԱԵԱ-ները կարող են ձեռք բերել սեփականության իրավունք կամ իրականացնել առկա իրավունքների պետական գրանցումը և փոխատուցվել որպես սեփականատեր:
		Վարձակալ (համայնքից, պետությունից)	Օրենսդրությամբ սահմանված ղեպքերում վարձակալը կարող է ձեռք բերել սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես սեփականատեր կամ նրան, հողի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնությամբ, կարող է տրվել նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա

			<p>վարձակալված հողի «շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% -ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:</p>
	<p>Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալ:</p> <p>Այլ գույքային իրավունք (սերվիտուտի, կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցողներ, բացառությամբ վարձակալների</p>	<p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի կանխիկ փոխհատուցում</p> <p>Հողամասի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, բացառությամբ վարձակալների, փոխհատուցումը տրվում է ազդակիր հողամասի դիմաց տրվող փոխհատուցման գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	
		<p>Իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ ոչ</p>	<p>Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպատակով ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքի հիման վրա (որն ավելի բարձր է)՝ հողի զբաղեցման տարիների հետևյալ համամասնությամբ (Յուրաքանչյուր ԱԵԱ-ի կողմից հողի զբաղեցման տարիների թիվը բացահայտելու համար հաշվի կառնվեն տեղեկատվության այն աղբյուրները, որոնք կկարողանան տրամադրել պահանջվող տեղեկությունները, մասնավորապես՝ համայնքի ղեկավարը, մասնավոր սեփականատերերը, չձևակերպված հիմունքներով օգտագործվող հողակտորի հարևանությամբ բնակվողները և ինքնակամ օգտագործող ԱԵԱ-ների հարևանները: Սա պետք է գրավոր կերպով համաձայնեցվի և հաստատվի բոլորի կողմից: Բացի վերը նշվածից՝ «Google Earth» տվյալները և օգտագործվող հողերի վրա առկա ծառերի</p>

		տարիքը հիմք կհանդիսանան տրամադրված տեղեկությունների խաչաձև ստուգման համար) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% -ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:
	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ-ի համար ընդունելի մեկ այլ համարժեք հողով:

Հողի փոխարինման արժեքի գնահատում

Հողի գնահատումն իրականացվել է փոխարինման արժեքով՝ հիմք ընդունելով շուկայական սակագները: Շուկայական սակագները գնահատվել են համեմատական մեթոդի միջոցով, ինչպես սահմանված է կառավարության կանոնակարգերով: Սույն մեթոդի հիման վրա որոշվել է հողի արժեքը՝ հաշվի առնելով միևնույն տեղակայություն և նույն կիրառման նպատակ/հատկանիշներ ունեցող վերջերս վաճառված առնվազն երեք համեմատման ենթակա հողամասերի վաճառքի ճշգրտված միջին արժեքը: Եթե գնահատվող հողամասի նույն վայրում ընդունելի համեմատիչներ առկա չէին, մեկ կամ ավելի համեմատման ենթակա հողամասեր են գծագրվել այլ վայրից:

Գնահատվող հողամասի և համեմատման ենթակա հողամասի հատկանիշների/որակի միջև փոքր տարբերություններն արտացոլելու նպատակով համեմատման ենթակա հողամասերի միջին շուկայական վաճառքները ճշգրտվել են՝ ըստ մի քանի համեմատության պարամետրերի և համապատասխան գործակիցների:

Գնահատման ընթացակարգը

Հողի գնահատման համեմատական մեթոդը կիրառվել է հետևյալ կերպով.

- 1) Համանման անշարժ գույքի շուկաները վերլուծվել են:
- 2) Առնվազն երեք համեմատության միավորներ են սահմանվել:
- 3) Տարբերակվել են համեմատության անհրաժեշտ տարրերը:
- 4) Համեմատության միավորների արժեքը ճշգրտվել է՝ ըստ համեմատության տարրերի և համեմատվող անշարժ գույքի համար միջինացված մի քանի փոփոխված գնային ցուցանիշների:
- 5) Ստացված շուկայական արժեքը համեմատվել է կադաստրային արժեքի հետ:

Սահմանվել է հողի գինը:

Քայլ 1

Համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվություն ընտրելու նպատակով՝ Գնահատողը օգտվել է հրապարակային աղբյուրներից (մասնագիտական ամսագրեր, կայքեր, արտաքին գովազդներ), անհատական տվյալների բազայից (*Գնահատողն իր գրասենյակում վարում է*

տվյալների բազա, որտեղ մուտքագրվում են վաճառքի ենթակա ակտիվների գները և վաճառքի տվյալները (որոնք հայտնի են Գնահատողին իր մասնակցությամբ իրականացված գործարքների արդյունքում), ինչպես նաև ԿՊԿ «Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն» ՊՈԱԿ-ից ձեռքբերված տեղեկատվությունից: Ստացված տեղեկատվության հիման վրա Գնահատողը օգտագործել է ամենահամադրելի/ համապատասխան տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով):

Քայլ 2

Սկզբունքորեն համեմատիչ արժեքների աղբյուր են հանդիսացել կատարված վաճառքների արձանագրությունները՝ ստացված ԿՊԿ «Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն» ՊՈԱԿ-ից: Եթե որոշակի հողամասի համար արձանագրությունները չեն ներառել օգտագործելի համեմատիչներ, ապա օգտագործվել են Կադաստրի պետական կոմիտեից ստացված գույքի ցանկի շուկայական գները կամ հողամասի վաճառքի առաջարկները (տրությունների թերթերում ու կայքերում)՝ համեմատիչների ձևավորման նպատակով: Յուրաքանչյուր գնահատված հողամաս համադրվել է առնվազն (3) երեք համեմատման ենթակա հողամասերով:

Քայլ 3

Համեմատման հողամասերի իդենտիֆիկացումից հետո մի քանի այլ լրացուցիչ պարամետրեր նույնպես հաշվի են առնվել՝ գնահատված հողամասերի և համեմատման հողամասերի հարաբերական որակի/հատկությունների համեմատության նպատակով: Գնային ճշգրտումների պարամետրերը և գործակիցները թվարկված են ստորև՝

Վաճառքի պայման և շուկայի վիճակ

Մրանք շուկայական գնի փոփոխություններն են, որ տեղի են ունեցել համեմատվող հողամասերի շուկայական վաճառքների և գնահատման ժամանակահատվածի միջև: Գնահատողը նաև հաշվի է առել գույքի՝ տարածամկետ վճարման պայմանով գնվելու հանգամանքը: Քանի որ անշարժ գույքի իրականացված վաճառքների շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է թարմ և ճշգրտված տեղեկատվության հիման վրա, և տարածամկետ վճարման պայմանով դեպքեր չեն եղել, կիրառվել է 1,0 գործակիցը:

Նպատակային և գործառնական նշանակությունը

Այս տարրերը ցույց են տալիս, թե ինչպես կարելի է օգտագործել տվյալ հողամաս՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, գյուղատնտեսական նպատակով և այլն: Գնահատողն ուղղում չի կատարել, քանի որ համաձայն ԱԶԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների և որ կամավոր տարաբնակեցման ուղեցույցի, գնահատումն իրականացվում է՝ փաստացի նշանակությունից ելնելով:

Փաստացի նշանակությունը

Սա ցույց է տալիս, թե ինչպես է օգտագործվում տվյալ հողամասն իրականում՝ անկախ դրա կադաստրային, նպատակային և գործառնական նշանակությունից: Այն դեպքերում, երբ ազդեցության ենթակա հողամասը փաստացի օգտագործվում է սեփականության վկայականում (կադաստրային քարտեզում) առկա նշանակությունից տարբերվող

նշանակությամբ՝ Գնահատողը գնահատման համար հիմք է վերցրել հողամասի փաստացի օգտագործման նշանակությունը:

Տվյալ օրինակում փաստացի օգտագործման նշանակությունը գնահատվող և համանման գույքերի դեպքում եղել է նույնը, և Գնահատողը ճշգրտող գործակից չի կիրառել:

Տեղադրություն և դիրք

Գնահատվող և համեմատման հողամասերը ներկայացվել են՝ ըստ թաղամասերի: Գլխավոր ճանապարհից հեռավորությունը նույնպես ցույց է տրվել: Տվյալ դեպքում կիրառվել է 20 % քայլով նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

Տրանսպորտի հասանելիություն

Մույն գործակիցը բնութագրում է գնահատվող և համեմատման հողամասերի հեռավորությունը տրանսպորտային գլխավոր հանգույցներից: Տրանսպորտի հասանելիությունը համարվել է նույնը գնահատվող և համեմատման հողամասերի համար, և որևէ գործակից չի կիրառվել:

Ընդհանուր մակերեսը

Այն դեպքերում երբ ազդեցության ենթակա հողամասերի ընդհանուր մակերեսը էական տարբերվում է համադրելի հողամասերի մակերեսներից՝ կիրառվում է ճշգրտող գործակից: Տվյալ դեպքում կիրառվում է 1,05 բարձրացնող գործակից:

Ենթակառուցվածքների առկայությունը

Բնութագրում է գնահատված հողամասի հեռավորությունը գլխավոր ենթակառուցվածքներից (ճանապարհ, ռոտգման և խմելու ջրատար, էլեկտրական հոսանքի գիծ, գազատար, կոյուղի): Եթե ենթակառուցվածքները մոտ են հողամասին կամ առկա են հողամասում, ապա նշվում է, որ տվյալ հողամասին ենթակառուցվածքները հասանելի են կամ հողամասը համալրված է տվյալ ենթակառուցվածքով:

Եթե հողամասը գտնվում է այնպիսի թաղամասում, որտեղ բացակայում է տվյալ ենթակառուցվածքը, և դրա առկայությունը քաղաքաշինական խնդիր է, ապա նշվում է, որ հողամասը չունի տվյալ ենթակառուցվածքը: Եթե գնահատվող հողամասը համադրելի հողամասերի նկատմամբ ենթակառուցվածքների առկայության տեսակետից ավելի նպաստավոր դիրք ունի, Գնահատողը կիրառում է 15 տոկոսի ուղղում:

Թեքություն

Շուկայի համակարգված դիտարկումները ցույց են տալիս, որ թեքություն ունեցող և չունեցող հողամասերը տարբեր գներ ունեն: Եթե գնահատվող և համեմատման հողամասերը հարթ են, տվյալ տարրի շտկման անհրաժեշտությունը չի լինի:

Գույքային իրավունքներ

Կախված նրանից՝ տվյալ հողամասի նկատմամբ իրավունքը սեփականություն է թե վարձակալություն, հողամասի գները տարբերվում են: Գնահատողն իրավունքների ճշգրտման գործակից չի կիրառել. հողամասերը կգնահատվեն որպես մասնավոր

սեփականություն, այնուհետև, կախված գույքի նկատմամբ առկա իրավունքի տեսակից և վարձակալության ժամկետից, կորոշվի փոխհատուցման չափը:

Բարելավումներ

Սա ցույց է տալիս, թե ինչ բարելավումներ ունի տվյալ հողամասը՝ բացի հիմնական շինություններից և ծառերից, օրինակ՝ մետաղական, փայտյա կամ քարե պարիսպ, բետոնապատված կամ ասֆալտապատ տարածք և այլն: Սակայն այս տարրով Գնահատողը ուղղում չի կատարել, քանի որ տվյալ բարելավումների արժեքն առանձին է հաշվարկվում և գումարվում է փոխհատուցման արժեքին:

Քայլ 4

Հողամասերի շուկայական գնի միավորը ճշգրտվել է՝ ըստ թվարկված համեմատության տարրերի: Ճշգրտման տրամաբանությունը ներկայացված է ստորև աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 3. Ընդհանուր հողամասի 1ւ² արժեքի հաշվարկը

Համեմատության տարրեր	Գնահատվող անշարժ գույք	Համանման անշարժ գույք 1	Համանման անշարժ գույք 2	Համանման անշարժ գույք 3
Մեկ քմ գին (ՀՀ դրամ)		27,500	29,213	27,163
Սակարկում (Վաճառքի պայման)		Վաճառք	Վաճառք	Վաճառք
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ժամանակ (Շուկայի վիճակ)	07.2017	05.2017	02.2017	12.2016
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Նպատակային նշանակություն	Բնակավայր	Բնակավայր	Բնակավայր	Բնակավայր
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Գործառնական նշանակություն	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Փաստացի նշանակություն (օգտագործում)	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Տեղադրություն	Լավ	Լավ	Լավ	Լավ
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Դիրք	Բավարար	Լավ	Գերազանց	Լավ
Ճշգրտման գործակից		0.90	0.80	0.90
Ճշգրտումը ՀՀ դրամով		-2,750	-5,843	-2,716
Տրանսպորտի հասանելիություն	Լավ	Լավ	Լավ	Լավ
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00

Համեմատության տարրեր	Գնահատվող անշարժ գույք	Համանման անշարժ գույք 1	Համանման անշարժ գույք 2	Համանման անշարժ գույք 3
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ֆիզիկական բնութագրեր՝ այդ թվում				
Ընդհանուր մակերես (քմ)	407,48	400,0	800,0	800,0
Ճշգրտման գործակից		1.00	1.05	1.05
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	1,461	1,358
Ճակատային մաս (մ)	Լավ	Բավարար	Բավարար	Բավարար
Ճշգրտման գործակից		1.15	1.15	1.15
Ճշգրտումը ՀՀ դրամով		4,125	4,382	4,074
Ենթակառուցվածքների առկայություն	Հարթ	Հարթ	Հարթ	Հարթ
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0

Թերություն	Սեփականություն	Սեփականություն	Սեփականություն	Սեփականություն
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Գույքային հրավորմանը	Առկա է	Առկա չեն	Առկա չեն	Առկա չեն
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Բարելավումներ		1,375	0	2,716
Ճշգրտման գործակից		28,875	29,213	29,879
Ճշգրտումը ՀՀ դրամով		0.33	0.34	0.33
Ընդհանուր ճշգրտում (ՀՀ դրամ)	29,321			

Քայլ 5

Անշարժ գույքի արժեքի վերաբերյալ վերջնական որոշումը սահմանվում է վաճառքների համեմատության միջոցով՝ վերլուծելով անշարժ գույքի համեմատման ենթակա վաճառքների ճշգրտված գները: Գնահատողը երեք համանման հողամասերի ճշգրտված գները միջինացրեց պարզելուց հետո, որ բոլոր երեք համանման հողամասերը գնահատվող հողամասին նմանություն ունեն, և տվյալների ստացման աղբյուրներն արժանահավատ են:

Քայլ 6

Այս մեթոդով ստացված շուկայական արժեքը համեմատվում է կադաստրային արժեքի հետ: Այն դեպքերում, երբ համեմատական մեթոդով ստացված շուկայական արժեքն ավելի բարձր է, քան հողամասի կադաստրային արժեքը՝ հիմք են ընդունվում համեմատական մեթոդով ստացված գները: Հակառակ դեպքում հիմք կընդունվի հողամասի տվյալ գոտու կադաստրային արժեքը: Հողամասի կադաստրային արժեքը պարզելու համար հիմք կընդունվի ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի N 1746-Ն կամ 19 մարտի 2015 թվականի N 275-Ն որոշումը:

Պահանջի դեպքում ազդակիր համայնքների հողամասերի կադաստրային արժեքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն առանձին կտրամադրվի Պատվիրատուին:

Քայլ 7

Այնուհետև հաշվարկվել է հողամասի շուկայական արժեքը հետևյալ բանաձևով՝

$$Հ_{CU} = Հ_U \times Ն_{CU}$$

որտեղ՝

$Հ_{CU}$ –ն հողամասի շուկայական արժեքն է,

$Հ_U$ –ն հողամասի մակերեսն է,

$Ն_{CU}$ –ն համանման հողամասերի 1 քմ շուկայական ճշգրտված արժեքն է:

6.3.2 Շինության /շենքի գնահատման մեթոդաբանություն

Ընդհանուր մոտեցում

Օտարվող շինությունների համար փոխհատուցումը հաշվարկվել է ինչպես օրինական շինությունների սեփականատերերի, այնպես էլ ինքնակամ շինությունների օգտագործողների համար: Յուրաքանչյուր խմբի համար ՀՕՏԾ-ի Իրավունքների սխեման սահմանում է փոխհատուցման հաշվարկի իր մոտեցումը: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև նկարում:

Աղյուսակ 4.

Բնակելի և ոչ բնակելի շինությունների փոխհատուցում

Բնակելի շենքեր, շինությունների կորուստ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից (ներառյալ՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ)	Բնակելի շենքի, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
Ոչ բնակելի շենքերի, շինությունների կորուստ	ԱԵԱ-երին սեփականության ն իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ	Սեփականատեր	Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
	Չձևակերպված շինություն քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության ն իրավունքով պատկանող հողի վրա:	Ինքնական շինություն կառուցած ԱԵԱ-ները հողի սեփականատերերն են	Ինքնական շինության կորստի դեպքում կտրամադրվի փոխհատուցում ինքնական շինության փոխարինման արժեքի չափով՝ առանց 15% հավելավճարի:
	Համայնքային կամ պետական սեփականություն ն հանդիսացող	Ինքնական կառույց իրականացրած ԱԵԱ	Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնական կառույց իրականացրած ԱԵԱ-ին կտրամադրվի

	հողամասի վրա անկա ինքնական կառույց		վերականգնման օժանդակություն՝ ինքնական կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:

Շենքերի/շինությունների փոխարինման արժեքի սահմանում

Շենքերի/շինությունների գնահատումը իրականացվել է +15% փոխարինման արժեքով՝ ՀՀ Քաղաքաշինության նախարարության գնագոյացման տեղեկատվության և հաշվարկման կենտրոնի (ՓԲԸ) կողմից առաջարկված մեթոդաբանության/չափանիշների հիման վրա: Այստեղ փոխարինման արժեքը հասկացվում է որպես ընդհանուր ծախս՝ վերակառուցելու համար այնպիսի շենք/շինություն, որն իր մակերեսով, նյութերով և առանձնահատկություններով համարժեք կլինի փոխարինվող շենքին/շինությանը առանց ամորտիզացիոն մասհանումների և գործառնական ծախսերի: Փոխարինման արժեքի հաշվարկումը հիմնվել է հետևյալ գործոնների վրա.

- ա. նյութերի տվյալ պահի շուկայական արժեքը,
- բ. նյութերի տեղափոխման տվյալ պահի արժեքը,
- գ. աշխատուժի ներկայիս արժեքները և
- դ. ազդեցությանը ենթակա շենքերի, կառուցվածքային/գեղագիտական առանձնահատկությունների արժեքը:

Հաշվարկները կատարվել են ամբողջ ՀՀ տարածքի համար հաստատված պաշտոնական գնահատման ցուցիչների և ճշգրտման գործակիցների, ինչպես նաև Շինարարական Աշխատանքների Խոշորացված Ցուցանիշներով (ՇԱԽՑ) սահմանված շինարարական աշխատանքների գնահատման համապատասխան:

Շենքերի և շինությունների փոխարինման արժեքները որոշվել են՝
 ա. Համապատասխան մասնագիտացված նորմատիվային տեղեկագրերում (ՇԱԽՑ) ներկայացված կամ հավաստի այլ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա,
 բ. շուկայական պայմաններում նմանատիպ շենքերի և շինությունների կառուցման համար շինարարության պայմանագրերում նշված արժեքի տվյալների հիման վրա:
 Անշարժ գույքի գնահատման նպատակով շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը հաշվարկվում են՝ որպես ուղղակի, անուղղակի ծախսերի և ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթի հանրագումար: Նմանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով.

$$V_{\sigma} = \Omega_{\sigma} + U_{\sigma} + 2\mathcal{C}$$

որտեղ՝

V_{σ} -ն նամանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերն են

Ω_{σ} - ն ուղղակի ծախսերի հանրագումարն է,

U_{σ} -ն անուղղակի ծախսերի հանրագումարն է,

$2\mathcal{C}$ -ն ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթն է:

Ուղղակի ծախսերը ներառում են շինարարության հետ անմիջականորեն կապված հետևյալ ծախսերը.

ա. նյութերի, արտադրանքների և ինժեներական ցանցերի ու համակարգերի ձեռք բերման ծախսերը,

բ. շինարարական մեքենաների և մեխանիզմների շահագործման ծախսերը,

